


636.04  
4-15

ՅԱ. Պ. ԿԱԼԵՆԻՆ ՅԵՎ Մ. Կ. ԺԱԿ

ԻՆՉՊԵՍ  
ՊԱՀԵԼ ԿՈՎԸ  
ՅԵՎ ՄԵԾԱՅՆԵԼ  
ՀՈՐԹԸ

ԿՈԼԽՈՋՆԻԿԻ ՈԺԱՆԴԱԿ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԱԶՈՎ-ՍԵՎՆՈՎՅԱՆ ՅԵՐԿԻՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՍՏՈՎ-ԴՈՆ — 1934



636.04 <sup>48.</sup>

4-15

ՅԱ. Պ. ԿԱԼՆԻՆ ՅԵՎ Մ. Կ. ԺԱԿ

30 JUL 2010

# ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԿՈՎԸ ՅԵՎ ՄԵԾԱՑՆԵԼ ՀՈՐԹԸ

ԿՈԼԽՈՋՆԻԿԻ ՈԺԱՆԴԱԿ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թարգմ. վ. ՇՎԱՐԴ

1008 / 3957  
36182



ԿԵՆՏՐՈՆԻ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ — 1934



2 JUN 2013

### ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐ ԿՈՒՍՈՋՆԻԿ ՊԵՏԲԵ ՈՒՆԵՆԱ ԿՈՎ, ՄԱՆՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԹՈՂՈՒՆՆԵՐ

«...Անասունների քանակի աճմանը մենք կարող ենք հասնել միայն այն դեպքում, յերբ համառ աշխատանքով լավացնենք գործն անասնապահական սովխոզներում և կոլխոզա-ապրանքային ֆերմաներում և ամեն կերպ աջակցենք առանձին կոլխոզնիկների անասնապահության զարգացմանը» (17-րդ կուսկամագումարում արված ընկ. Մոլոտովի զեկուցումից):

ՀԿ(Բ)Կ Կենտկոմն ու ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը 1931 թվի հուլիսին բոլոր կուսակցական, խորհրդային, տնտեսական և հողային կազմակերպություններին ուղղած իրենց գիմումի մեջ մատնանշում են, վոր կոլխոզա-ապրանքային ձեւմաները հանդիսանում են պեճուքյան համար ապրանքային անասնապահական մթեբների կարեվորագույն արտադրողը:

Բայց, միևնույն ժամանակ, հենց նույն գիմումում մատնանշվում է, վոր ապրանքային ֆերմաները պետք է զարգանան «կոլխոզնիկների անհասական սպառողական անասնապահական սնեստուքյան հես միասին»:

Հետագայում կուսակցությունը և կառավարությունը ձեռք առին բոլոր միջոցները, վորպեսզի զարգացնեն ու ամրացնեն անասնապահությունը կոլխոզնիկի ոժանդակ տնտեսության մեջ: Յերբ 1932 թվի գարնանը նկատվեց, վոր վորոշ տեղերում անց է կացվում անասունների ընդհանուր համայնացման հակակուսակցական, «ձախլիկ» գիծ, այն ժամանակ կուսակցության Կենտկոմը միանգամայն վճռականորեն մատնանշեց այդ գծի անթույլատրելիությունը և կրկին անգամ հաստատեց, թե՛ կուսակցության խնդիրն է, վոր յուրաքանչյուր կոլխոզնիկ ունենա իր կովը, մանր անասունները, քոչուկները յեվ այլն»:

Դրա հետ միաժամանակ կուսակցության Կենտկոմն առաջարկեց «ոգնել յեվ աջակցել կոլխոզնիկներին նրանց անձնական կարիքների համար ջանել անասուններ գնելու յեվ անեցնելու գործում»:

Կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը 1933 թվի փետրվարին հարվածային կոլխոզնիկների համագումարում արդեն կարող եր հայտարարել.

«Մենք հասանք նրան, վոր կոլխոզնիկների մեծամասնությունն արդեն իրենց բակերում ունեն մի-մի կով: Կանցնի ելի սի-յերկու սարի յեվ դուք չեք գնի վոչ մի կոլխոզնիկ, վորը չունենա իր կովը: Իսկ մենք, բոլեբիկներս արդեն կաշխատենք, վորպեսզի մեզանում բոլոր կոլխոզնիկները մի-մի կով ունենան»:

17-րդ կուսհամագումարը հաստատելով յերկրորդ հնգամյակի պլանը, կրկին անգամ վորոշակի մատնանշեց, թե ինչպիսի ուշադրություն պետք է դարձնել անասնապահության՝ կոլխոզնիկի ոժանդակ տնտեսության մեջ: Այդ պլանի համաձայն սովխոզները և կոլխոզային ֆերմաները մինչև 1937 թիվը պետք է հանձնեն կոլտնտեսականներին 2 միլիոն հորթ, 17 միլիոն խոզի ձագ յեվ մի միլիոն 200 հազար գառներ:

Կոլխոզնիկների ոժանդակ տնտեսության մեջ խոշոր յեղջյուրավոր անասունների քանակը պլանի համաձայն պեճ է անի 1932 թվին յեղած 24 միլիոն 300 հազարից (այդ քանակն ունեյին կոլխոզնիկներն ու մենատնտեսները) մինչեվ 44 միլիոն 900 հազար գլուխ: Դա նշանակում է, կոլխոզնիկների ոժանդակ տնտեսության մեջ 2-րդ հնգամյակի վերջում խոշոր յեղջյուրավոր անասուն համարյա յերեք անգամ ավելի պետք է լինի, քան սովխոզներում և կոլխոզային-ապրանքային ֆերմաներում միասին առած: Այստեղից պարզ է, վոր կոլխոզնիկների ոժանդակ անասնապահությանը զբաղվելու ձևը և նրա արդյունավետությունը մեծ նշանակություն ունեն անասնապահական մթեբներին պաշարներ ստեղծելու և յերկրի բնակչության սընունդը բարելավելու գործում:

Հարվածային կոլխոզնիկների համագումարում ընկ. Ստալինի արած հայտարարությունից վեց ամիս հետո, ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և կուսակցության Կենտկոմը «Կովագուրկ կոլխոզնիկներին կով ձեռք բերելու գործում ոգնելու» վորոշումը հանեցին, արտոնյալ պայմաններով վաճառելով նրանց մի միլիոն հորթ: Դրա հիման վրա ՀԿ(Բ)Կ Յերկրկոմը և Յերկրգործկոմը վորոշեցին բաց թողնել (վաճառել) կովագուրկ կոլխոզնիկներին,



արտոնված պայմաններով 100 հազար հորթ, 27 հազար 500 գառ, 75 հազար ճագար, 610 հազար թռչուն: Յեվ այդ վորոշումն արդեն կատարված է:

Այդպիսով ընկ. Ստալինի այն խոսքերը, թե «Մենք, բոլեվիկներս արդեն կաճխասենք, վորպեսզի մեզանում կոլխոզնիկներն ունենան մի-մի կով», արագ յեվ վնասկանուրեն իրագործվում են կյանում:

Կառավարութունը ուզելով կոլխոզնիկներին հորթ ձեռք բերելու գործում, հոգ է տանում, վորպեսզի կոլխոզնիկն ապահովի իրան նաև անասունների կերով: Այսպես, որինակ, Յերկրագործկոմը սիլոսացման պլանի վերաբերյալ 1933 թվի հունիսի 10-ի վորոշման մեջ պարտավորեցրել է ՄՏ կայանների դիրեկտորներին և կոլխոզների նախագահներին ստեղծել յուրաքանչյուր կոլխոզում սիլոսի պաշար, վորը լրիվ բավարարի վոչ միայն ամբողջ համայնացրած անասունների, այլև կոլխոզնիկների անհատական անասունների կարիքը:

Կոլխոզներում գանվող բոլոր կերերը, վորոնք մնում են համայնացրած անասունների և լծկանի կարիքների բավարարումից հետո, կառավարության վորոշման համաձայն, նույնպես բաշխվում են կով ունեցող կոլխոզնիկների միջև՝ վաստակած աշխորների քանակի համաձայն:

Պետությանը կաթ հանձնելու նոր նորմաները կոլխոզնիկի համար շատ քիչ են և բոլորովին ծանրաբեռնող չեն: Կոլխոզնիկը պետությանը պետք է հանձնի կովի տված տարեկան կաթի հինգերորդ մասից վոչ ավելին:

Այդպիսով, բոլոր պայմանները կան, վորպեսզի կոլխոզնիկը կարողանա հաջողությամբ կով պահել, լավացնել իր ընտանիքի սնունդը յեվ մթերքներ հանել կոլխոզային շուկան:

Սակայն յուրաքանչյուր կոլխոզնիկ պետք է հաստատ գիտենա, վոր նրա հիմնական սնեսությունը — դա կոլեկտիվ սնեսությունն է: Ընկ. Կազանովիչն այդ հարցի առթիվ իր յելույթներից մեկում նկատեց, վոր՝

«Լրացուցիչ սնեսությունն թույլատրելի չպետք է նշանակի խրախուսանք հակահասարակական. հակակոլխոզային քամիդությունների, վորոնք ձգտում են դարձնել կողմնակի քնեսությունը հիմնական, իսկ կոլխոզայինը լրացուցիչ»:

Կոլխոզնիկն ինչքան լավ աշխատի կոլխոզում, այնքան ավելի շուտ կամրանա կոլխոզը, այնքան ավելի շուտ կհասնի կոլխոզնիկն ունևոր կյանքին: Կոլխոզնիկն ինչքան շատ աշխոր ունենա, այնքան շատ կերեր կստանա կոլխոզից, ավելի լավ ու հեշտ

կկերակրի իր կովին և նրա ընտանիքն ավելի լավ ապահովված կլինի իր կովի կաթնամթերքներով:

Կովից հնարավորին չափ շատ ոգուտ ստանալու համար, անհրաժեշտ է նրան ճիշտ խնամել, ճիշտ կերակրել, իսկ դրա համար կոլխոզնիկը պետք է ծանոթանա այն բոլորի հետ, ինչ այդ հարցի առթիվ ասել են գիտությունն ու վործը:

Ներկա զբջում ասված է այն հիմնականը, վորը պետք է իմանան կոլխոզնիկն ու կոլխոզնիկուհին կովի խնամքի վերաբերյալ: Իրա հետ միասին կոլխոզնիկը չպետք է մոռանա նաև կոլխոզային-ապրանքային ֆերմայի գոյությունը, վորտեղ գործն արդեն զբված է կամ զբվում է անասնապահության տեխնիկայի բոլոր կանոնների համաձայն և նա կարող է իրեն հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանը գտնել և գործնականապես ծանոթանալ անասունների ճիշտ խնամքի ու պահպանման հետ:



# ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅԵԼ ԿՈՎԻՆ

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ԳՈՍԸ

Կովը լավ կաթ կտա այն ժամանակ, յերբ նա կպահվի լավ և հարմար շենքում:

Գոմը պետք է լինի չոր, լուսավոր, բավական զառ յեվ առանց միջանցուկ փամփնեի: Մառը շենքում կովի ընդունած կերի մի մասը ծախսվում է նրա մարմինը տաքացնելու վրա: Կոլխոզնիկի համար անհամեմատ ձեռնտու յե մի անգամ քիչ միջոցներ ծախսել ու աշխատանք թափել շենքը տաքացնելու համար, քան ամեն տարի իզուր կորցնել կերը: Բացի այս, ցուրտ շենքում, մինչև անգամ լավ կերակրելիս, կովը չի կարող տալ այնքան կաթ, ինչքան տաք շենքում:

Շենքը չպետք է լինի նաև շատ տաք, սոթ: Շատ տաք շենքում և վատ ուղափոխության դեպքում կովը կքրանի և վատ կուտի կերը: Ամենաչնչին միջանցուկ քամու դեպքում կամ սառնամանիքին կովը, բակ դուրս բերելիս, կմըսի:

Շենքի ամենալավ ջերմությունը 8—10 աստիճանն է: Զերմաչափը շատ եծան է, վոչ ավել՝ քան մի ուղբլի և շատ ձիշտ կլինի, յեթե կոլխոզնիկունին ջերմաչափ գնի, կախ տա գոմի պա- և նրա համաձայն կարգավորի տաքությունը:

Գոմը պետք է լինի լուսավոր: Մութ շենքում կանգնում է կովը տխուր, ավելի վատ է ուտում և ավելի քիչ կաթ է տալիս:

Մութ, խոնավ շենքում կովը ավելի հաճախ է հիվանդանում վարակիչ հիվանդություններով, վորովհետև վարակն ամենից հաճախ ապաստան է գտնում մութ, խոնավ շենքերում: Իսկ արևի ճառագայթներն այնպես լավ են սպանում վարակին, ինչպես ախտահանող նյութերը, ինչպես, որինակ՝ կարբոլը, կիրը և այլն:

Լուսավոր շենքն ավելի հեշտ է մաքուր դրության մեջ պահել: Ահա թե ինչու գոմն անպայման պետք է ունենա մի կամ յերկու լուսամուտներ, վորպեսզի այնտեղ նույնպես լուսավոր լինի, ինչպես բնակարանում: Յանկալի յե, վոր գոմի պատերն սպիտակացվեն կրով կամ կավիճով:

Գոմի ողբ միշտ պետք է մաքուր լինի: Յեթե գոմում շատ նեղվածք լինի, աղբը հաճախ չմաքրվի, մեզը յերկար մնա, ապա այնտեղ կկուտակվեն վնասակար գազեր: Դրանից կովը իրեն վատ կզգա և նա չի կարող շատ կաթ տալ: Ինչքան ողբ մաքուր լինի շենքում, այնքան կովը առողջ կլինի և ավելի շատ կաթ կտա: Մեծ անասնաբակերում շենքի ողափոխության համար կառուցվում են հատուկ խողովակներ — վենտիլյատոր, իսկ փոքրիկ գոմը կարելի յե մաքրել պատուհանի ողանցքով:

Գոմի ներսը պետք է լավ սարքել: Ամենից լավ է հատակը փայտից շինել:

Կարիք չկա ուրեմն տախտակները դնել կովի կանգնած տեղի ամբողջ յերկարությամբ, այլ միայն հետևել վոտների տակ այնպես, վորպեսզի ստացվի 70 սանտիմետր լայնությամբ հրապարակ: Տախտակները կարելի յե մեխել կովի կանգնած տեղի յերկարությամբ գետնի մեջ ձգված գերանին: Ամենից լավ է, առջևի վոտների տակը կավից սարքել:

Կանգնած տեղի յերկարությունը պետք է լինի մոտավորապես 160 սանտիմետր՝ այն հաշվով, վոր աղբը և մեզը հատակին չթափվեն, այլ աղբի խողովակը: Այդ դեպքում յեթե կովը մինչև անգամ պառկի, ապա չի կեղտոտվի: Աղբի խողովակը այնպիսի լայնություն պետք է ունենա, վոր նրա միջից կարելի լինի աղբը հանել սովորական բահով:

Հատակի թեքությունը գեպի աղբախողովակը շատ քիչ պետք է անել, մոտավորապես մի մետր յերկարությանը մի սանտիմետր: Խիստ թեք հատակը վնասակար է, մանավանդ հղի կովի համար:

Նախքան գոմի հատակը տախտակելը, պետք է տախտակներին (մանավանդ աղբակույտի տախտակներին) լավ կուպր քսել, իսկ կուպր չլինելու դեպքում՝ մագուժ կամ նավթ, վորպեսզի նրանք չփտեն և մեզ չծծեն:


Լավ կառուցված մսուրը մեծ նշանակություն ունի: Նա պետք է հարմար լինի կովի համար և միևնույն ժամանակ թույլ չտա, վոր կովը թափթփի կերը:

Կոլխոզնիկը կարող է իր գոմում կառուցել, այսպես կոչված, դանիական մսուր: Նա բաղկացած է մի տաշտից և փայտե




ամուր վանդակից: Կերն ուտելու համար կովը պետք է գլու խը կոխի վանդակում յեղած անցքից: Այդպիսի հարմարեցումը հնարավորութիւնն չի տալիս ուտելու ժամանակ կերը թափթրփել փոսների տակ:

Մսուրը բաղկացած է տաշտից և կերի սեղանից, ինչպես ցույց է տրված № 1 նկարում: Տաշտի խորութիւնը լինում է 22



Նկ. 1. Գանձիկան մուր:



Ընդհանուր տեսքը կտրվածքով:

սանտիմետր, լայնութիւնը 17 — 18 սանտիմետր, իսկ վերևում 35 սանտիմետր:

Կերի սեղանն ունի 50 սանտիմետր լայնութիւն և վերևից միացված է տաշտի հետևի կողքին: Նա վերջանում է 30 — 40 սանտիմետր բարձրութիւն ունեցող յեզրով:

Տաշտը շրջանակի վրա դրվում է այն հաշվով, վոր նրա հատակը 30 սանտիմետրից բարձր չլինի:


Տաշտի առաջ վանդակը պատրաստվում է 72 սանտիմետր բարձրութեամբ, վորպեսզի նա չխանդարի կովին կանգնելու: Վանդակի կերանցքը ներքևում պետք է ունենա 17 — 18 սանտիմետր լայնութիւն, իսկ վերևում՝ 50 սանտիմետր: Մսուրի յերկարութիւնը բավական է 110 — 120 սանտիմետր: Մսուրը գոմոմ այնպես են դնում, վոր կարելի լինի անցնել նրա հետևը՝ կեր տալու և տաշտը կերի մնացորդներից մաքրելու համար:

Կովին պետք է կապել վոչ թե վզից, այլ պարանից պատրաստված թեթև սանձից: Փափուկ լինելու համար լավ է այդպիսի սանձը փաթաթել կտորով:

Կովատեղը կարելի յե սարքավորել նաև ամերիկական ձևով: Այդ ձևի մսուրը բոլորովին ցածր է լինում, իսկ կովատեղի յերկարութիւնը հավասարվում է կովի մարմնի յերկարութեանը, այսինքն՝ մոտավորապես 155 — 160 սանտիմետր: Իսկ կապն

այնպես է սարքվում, վոր կովը տեղում չի կարող հետ ու առաջ շարժվել: Ենորհիվ այդպիսի կառուցվածքի, կովը հետևի փոսներով կանգնում է կովատեղի ամենածայրին, դրա համար ել աղբը և մեզը կովատեղի հատակին չեն թափվում և կովը պառկելիս չի կեղտոտվում:

Մսուրի հատակի լայնութիւնը 50 սանտիմետր է, իսկ վերևի լայնութիւնը — 80 սանտիմետր: Ներքին յեզրի բարձրութիւնը



Նկ. 2. Ամերիկյան մուր, կովատեղը յեկ կապը


25 սանտիմետրից պակշի չե, վորպեսզի կովը պառկելիս չխանդարի: Արտաքին յեզրը շինվում է 80 սանտիմետր բարձրութեամբ: Մսուրի հատակը գետնից բարձր է ընդամենը 5 սանտիմետր:

Կապը շինվում է կամ փայտի կախված լծի ձևով, ինչպես ցույց է տրված նկարում, փամ շղթայից: Ավելի հեշտ է անել շղթայից: Դա մի յերկար շղթա յե, վորը ձգված է մսուրի յեզրի և տաշտի յերկարութեամբ գետնից 115 սանտիմետր բարձրութեան վրա անցնող ձողի միջև: Յերկար շղթայի վրա, նրա յերկու ծայրերին յեղած ողակների միջոցով հագցնում են կարճ շղթա: Նրա յերկարութիւնը 50 սանտիմետր է: Ստացվում է մի ողակ, վորը կարող է շարժվել շղթայի վրա ներքև ու վերև:

Կովը կապելու համար, այսինքն՝ ողակը կովի վիզը հագցնելու համար, մեծ շղթայի վերևի ծայրը, վոր կեռով ամրացված է ձողին, հանում են, ողակը լայնանում է, ընկնում է վիզը և շղթայի վերին ծայրը նորից ամրացնում են կեռի միջոցով: Թե ինչպես է կառուցված շղթայի կապը, յերևում է 2-րդ նկարից:



Կովատեղի յերկարությամբ պետք է ամրացնել մի տախտակ կամ գերան, վորպեսզի կովը չպառկի տեղի լայնությամբ:



Նկ. 3.

Շորայակապ—լուծ՝ ամերիկյան ձեռքի կարն կովատեղի համար

Հանգույցի շինվածքը շորայակապի համար

Կապի անհարմարության հետ կովը հեշտությամբ է հաշտվում, բայց դրա փոխարեն նրա խնամելն զգալի կերպով հեշտանում է, ավելի հեշտ է լինում նրան մաքուր պահել:

### ԿՈՎԻ ԽՆԱՄԲԸ

Կովին ճիշտ խնամելը շատ մեծ ազդեցություն ունի նրա կաթնատուության վրա: Դժբախտաբար այդ բանը դեռ շատ կոխողներին հաշի չեն առնում:

Շատ կարևոր գործ է կովին մաքրելը: Մաքրելը վոչ թե գեղեցկության, այլ գլխավորապես նրա համար է, վորպեսզի կովի մարմինը ճիշտ և կանոնավոր աշխատի: Կաշու վրա գրտնվում են մեծ քանակությամբ շատ փոքր անցքեր (նրանք կոչվում են ծակոտիներ), և այդ անցքերի միջոցով մարմնի միջինը դուրս են գալիս վնասակար գազերն ու քրտինքը, իսկ քրտինքի հետ միասին և վնասակար նյութերը: Կաշու ճիշտ աշխատանքն ոգնում է թոքերի և յերիկամունքի աշխատանքին: Իսկ յեթե կենդանու մարմինը կեղտոտ լինի, մանր անցքերը ծածկված կլինեն կեղտով, ապա կխախտվի մարմնի ճիշտ աշխատանքը, վորը և կազդի արտադրողականության, այսինքն՝ կովի կաթնատուության վրա: Թե վնրճան կարևոր է կաշու աշխատանքը, յերևում

է նրանից, վոր յերբ փորձի համար կենդանու ամբողջ մարմինը պատեցին կուպրով, 3 — 4 որից նա սատկեց:

Կաշին կեղտոտ պահելու դեպքում կարող են վոջիներ և ուրիշ միջատներ առաջանալ: Կովը մաքուր պետք է պահել նաև նրա նամար, վոր մաքուր կաթ ստացվի: Ինչքան ել ուշագրի կթեն կեղտոտ կովը, համենայն դեպս կաթի հետ միասին դույլի մեջ կթափվեն շատ մազեր և կեղտի ու աղբի կտորներ:

Կովը պետք է մաքրել ամեն ուր յե՛վ միայն խոզանակով: Մետաղասանրը գործածում են միայն խոզանակի վրայից մազերն ու կեղտը հանելու համար: Յեթե կենդանին աղբի մեջ սաստիկ կեղտոտվել է, ապա կեղտոտ տեղերը պետք է լվանալ և ծղոտի փնջով տրորել, բայց վոչ մի դեպքում չորացած աղբը մետաղասանրով չմաքրել, վորը կեղտի հետ միասին պոկում է և մազերը:

Գործնականում շատ անգամ ստուգված է, վոր ամեն ուր յնամբով մաքրելու դեպքում, կովը մոտավորապես մի քառնեռոզ մաս ավելի կաթ կսա, քան նրա կաշին կեղտոտ թողնելու դեպքում:

Ամառը նույնպես ամեն ուր կովը պետք է խոզանակով մաքրել: Դա արվում է նրա համար, վորպեսզի մազերից պոկվեն բոռի ձվիկները, նույնպես և սանրվեն նրանցից դուրս յեկած, բայց դեռ կաշու մեջ չմտած թրթուրները: Յեթե այն նախագրուշահան միջոցները չգործադրվեն, ապա հետևյալ գարնանը կովի մեջքի վրա կգոյանան մի շարք խոցեր՝ բոռի թրթուրներով հանդերձ: Այդ խոցերը կովին ուժեղ քոր են պատճառում, նա անհանգստանում է, վատ է արածում և պակաս կաթ է տալիս:

Կովի տակ պետք է փռել չոր և չմզլած հարդ, այն ել որական 2 — 3 անգամ: Ավելի լավ է քիչ փռել, բայց հաճախ, քան թե ուշ և շատ:

Յեթե կովը քիչ է ման գալիս, որինակ, ձմեռը, ապա նրա կճղակները սաստիկ աճում են: Յերկար կճղակները կովին շատ մեծ անհարմարություն են պատճառում: Այդ դեպքում կովին ստիպված է հենվել վոչ թե ներբանին, այլ կրունկին, իսկ դա նրան շատ է հողնեցնում և խանգարում է ազատ ման գալ: Յերկարացած կճղակները հաճախ կտրվում են և ստիպում են կովերին յերկար ժամանակ կաղալ: Գարնանը, կովերն արոտ հանելուց առաջ պետք է անպայման կճղակները նայել և յեթե անհրաժեշտ լինի, ապա պետք է մաքրել և կտրել նրանց:

Պետք է մաքրել դանակով, կտրելով կճղակի ներբանի մեռած շերտը: Պետք է կտրել մինչև սպիտակ գծի յերևալը, վո-




բովհեաէ արդէն գալիս ե յեղջուրային կենդանի շերտը: Իրանից հետո կտրոււմ են կճղակի տրտաքին ծայրը, այնպես վոր պարտակ գիծը գտնվի կճղակի ծայրից մոտավորապես մեկ ու կես սանտիմետրի վրա: Ավելի հեշտ ե այդ բանն անել դուրով, կավի վտար դնելով տախտակի վրա: Պետք ե կովի առջևի վտաներից մեկը բարձրացրած պահել, վորպեսզի նա հանգիստ կանգնի և վտար չշարժի:

Ինչքան ել գոմը լավ լինի, բայց դարձյալ անհրաժեշտ ե, վոր կովը ձմեռը բախոււմ ամեն ուր գրասնի: Թարմ ոգում կատարած շարժումներից կովը իրեն ավելի առողջ ե զգում, հազվագյուտ ե հիվանդանում մրսելուց և ավելի շատ կաթ ե տալիս: Կովին զբոսանքի պետք ե թողնել որական յերկու ժամ և միայն լավ յեղանակի կամ հողմաշունչ սառնամանիքի դեպքում կարելի յ ե դուրս չհանել:

Կովին պետք ե ջրել մաքուր հորի կամ հոսուն

ջրով: Լճակների ջուրն անպետք ե: Չմեռ ժամանակ պետք ե տալ թեթևակի տաքացրած ջուր, այնպես վոր նա ունենա 12—15 աստիճան սառուքում: Չուրը տաքացնելու ամենահասարակ ձևը— դա ջրով լի դուլլի կամ չանի մեջ շիկացրած յերկաթի կտոր ձգելն ե: Սառը ջուր տալը կմրսեցնի, իսկ հղի կովերին վիժեցնել կտա: Բացի այդ, դա ուղղակի ձեռնտու չե, վորովհետև խմած սառը ջուրը կովը պետք ե տաքացնի մինչև իր մարմնի ջերմության աստիճանին, կերածի հաշվին, նշանակում ե կաթնատվության պակասեցման հաշվին: Միանգամայն հասկանալի յե, վոր ավելի շահավետ ե ջուրը տաքացնել կերի համար անպետք ծղոտով, աթարով և այլն, քան թե այդ բանի համար ծախսել խոտ կամ ուրիշ կեր:

Չմեռը կովը պետք ե ջրել որական յերկու անգամ, իսկ ամառը, շոգին, վոչ պակաս քան յերեք անգամ: Պետք ե հաստատ իմանալ, վոր ժամանակին լավ ջրելը մեծ ազդեցություն ե անում կովի կաթնատվության վրա: Իսկ պետք ե պարզ լինի հենց նրանից, վոր կաթի 100 մասից 90 մասը կազմում ե ջուրը:



Նկ. 4. Խոշոր յեղջուրավուր անասնի կնդակի կտրելը: Կտրելով ցույց ե տրված, քե ինչպես պետք ե կտրել կնդակը:

## ԿԹԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՐԾԻ ԽՆԱՄԲԸ

Կովի մթերատվությունը շատ կախված ե նաև կուրծը հմուտ խնամելուց և ճիշտ կթելուց:

Կան կթելու մի քանի ձևեր, բայց ինչ ձևով ել վոր կթեն, այդ բանը կովին պետք ե հաճելի լինի և հիշեցնի հորթի ծծելը: Լավագույն ձևը համարվում ե հոլլանդականը, կամ, ինչպես հաճախ ասում են, «բուռնցքով» կթելը:

Նախ քան կովը կթելը, պետք ե կուրծը լվանալ տաք ջրով և փափուկ մաքուր շորով սրբել, չորացնել: Այնուհետև պետք ե տաք ջրով ձեռքերը լվանալ, վորպեսզի նրանք բոլորովին մաքուր լինեն:

Մասների յեղունգները պետք ե կարճ կտրել: Շորի թևերը պետք ե մինչև արմունկները ծալել:

Ավելի հարմար ե կովը կթել՝ նստելով 25 սանտիմետր բարձրության փոքրիկ աթոռի վրա:

Հոլլանդական ձևով կթում են այսպես. կթողը ձեռքով այնպես ե բռնում պտուկը, վոր նրա ծայրը բուռնցքից դուրս ցցվի և ձկույթը չթրջվի: Կթելն սկսվում ե նրանով, վոր պտուկը վերևից բռնում են մեծ մատով և ցուցամատով, վորպեսզի կաթը պտուկից վերև դեպի կուրծը չբարձրանա: Իրանից հետո բուռնցքը հետդեպ սեղմում են ծալելով սկզբում յերրորդ, ապա չորրորդ և հինգերորդ մասները:

Ամեն անգամ կաթը դուրս սեղմելուց առաջ թեթևակի հարվածում են կուրծը այնպես, ինչպես անում ե հորթը ծծելիս:

Պետք ե կթել կամ չոր ձեռքերով կամ քիչ վազելին և կամ անալի յուղ քսելով: Վոչ մի դեպքում չպետք ե ձեռները կաթով թացացնել:

Միաժամանակ պետք ե կթել կամ խաչաձև գտնվող, կամ առջևի գույգ պտուկները, իսկ հետո հետևի գույգ պտուկները: Պետք ե կթել արագ, համաչափ յեվ առանց խանգարումների:

Իուլը պետք ե ծնկների միջև այնպես պահել, վոր նրա մեջ ընկնեն ուղղակի ներքև ուղղված կաթի շիթերը. թեք կթելը փչացնում ե պտուկները:

Կաթի առաջին շիթերը շատ ջրալի յեն և պարունակում են մեծ քանակությամբ բակտերիաներ, վորոնք մտել են պտուկի բացվածքից:

Բակտերիաները շատ մանր կենդանի եյակներ են: Նրանցից վոմանք առաջացնում են կենդանիների հիվանդություն, մյուսները թթվեցնում են կաթը, յերրորդները նեխում են և այլն:



կաթի առաջին շիթերը պետք է կթել կամ հատակի, կամ հատուկ ամանի մեջ և հետո թափել աղտաշրի մեջ:

Հնարավորին չափ կուլը պետք է մաքուր կթել: Այդպես պետք է անել յերկու պատճառով. նախ և առաջ՝ վերջին կաթն



Նկ. 5. Չափից ցույց է տրված կուրծի աջ կեսի տրորումը. աջից—ձախ կեսին:

ամենալուրճն է, իսկ յերկրորդ՝ չկթված կաթը կարող է կուրծի հիվանդութուն առաջացնել:

Կթելու վերջում պետք է կուրծը տրորել: Տրորելն ոժանդակում է կուրծի ուժեղ աշխատանքին և շնորհիվ նրան, բարձրացնում է կաթնատվութունը:

Տրորում են հետևյալ կերպ. յերկու ձեռքով բրունում են կուրծի կեսն այնպես, վոր ձախ ձեռքը սեղմի կուրծի հետևի մասը, իսկ աջը-առջևի մասը: Այդ ժամանակ մեծ մատները գտնվում են դրսի կողմը, իսկ մնացածները կուրծի աջ և ձախ կեսերի միջով անցնող փոստում: Այնուհետև կուրծը թեթեակի բարձրացնում են վեր, սեղմում են և նորից իջեցնում:



Նկ. 6. Կրծի առաջամասի աջ կողմի բարձր տրորումը:

Այսպես կրկնում են 4—5 անգամ, իսկ հետո կթում են մնացած կաթը: Այսպես վարվում են նաև կուրծի մյուս կեսի հետ: Այնուհետև տրորում են կուրծի յերկու առջևի մասերը, իսկ հետո հետևի մասերը:

Պետք է կթել միշտ որվա միևնույն ժամանակը:

Ծնելուց հետո առաջին 4 ամիսն ավելի լավ է կթել որական յերեք անգամ և միայն կաթնատվության սաստիկ պակասե-

լուց հետո կարելի չէ անցնել յերկու անգամ կթելուն: Չանել կովը պետք է կթել որական յերեք անգամ նույնիսկ այն դեպքում, յեթե նա քիչ է կաթ տալիս, վորովհետև հաճախակի կթելը նպաստում է կուրծի ավելի արագ զարգացմանը: Վոչ մի միտք չունի պակաս, մոտավորապես 5 լիտր կաթ տվող պառավ կովերը կթել որական յերեք անգամ, քանի վոր դրանով կաթնատվութունը չի ավելանում:

Կթելու ժամանակը պետք է հնարավորին չափ բաժանել հավասարաչափ: Յերկու անգամ կթելու ժամանակ պետք է կթել առավոտյան ժամի 6-ին և յերեկոյան ժամը 6-ին: Իսկ յերեք անգամ կթելիս՝ առավոտյան ժամի 4-ին, ցերեկվա 12-ին և յերեկոյան 8-ին:

Կթելուց հետո պտուկները պետք է սրբել, չորացնել և քիչ վաղելին կամ կովի անալի յուղ քսել, հակառակ դեպքում պտուկները քամուց կճաքճաքեն և փոքրիկ վերքեր կառաջանան: Կթելու ժամանակ այդ վերքերը կովին ցավ են պատճառում, վորից նա անհանգստանում է և պակասեցնում է կաթը:

Շատ կովերի կուրծերը պատած են լինում յերկար փափուկ մազով: Պառկելու ժամանակ այդ մազերին աղբ է կրպչում և առհասարակ նրանք խանգարում են լվանալ և սրբել կուրծը կթելուց առաջ. դրա համար այդ մազերը պետք է հեռացնել: Իսկ անում են այսպես. մի ձեռքով ծածկում են պտուկը, մյուսով կուրծի մակերեսին անց են կացնում մոմի բոցը: Յերկար մազերը բոցավառվում են և այրվում համարյա մինչև կաշին: Մազերի այրելը կովին բոլորովին ցավ չի պատճառում: Յերբ կրկին մազերը բուսնում են, նորից այրում են:

Ինչքան մաքուր են պահում կովը, հատկապես կուրծը, և խնամքով են կթում, այնքան կուրծը սակավ է հիվանդանում:

## ԿՈՎԻ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ

Հղիանալու համար կովը պետք է զուգավորել սեռական ցանկության ժամանակ: Ցանկությունից առաջ կամ հետո յեղած զուգավորումը բոլորովին անոգուտ է:

Ծնելուց հետո կովի առաջին ցանկությունը հայտնվում է ծնելուց մոտավորապես 21—28 ուր հետո: Սովորաբար դժվար չէ վորոշել ցանկության հայտնվելը: Կովն սկսում է անհանգստանալ, բառաչում է, թռչում է մյուս կովերի վրա, կամ ընդհակառակը, նրա վրա յեն թռչում մյուս կովերը—«զուգավորում են»: Բացի այդ, հեշտոցի շրթունքներն ուռչում են և անցքից



հոսում ե ձգվող լորձուհւք: Շատ հաճախ կլթան կովերը ցանկու-  
թյան ժամանակ պակասեցնում են կաթնատվությունը, իսկ  
կաթն ավելի ջրալի յե դառնում: Նրհար, հիվանդացած կովերի  
և կաթնառատ կովերի ցանկությունն անցնում ե աննկատելի  
կերպով: Նրանք հանգիստ են մնում, միայն ուռչում են նրանց  
հեշտոցի շրթուկները և հայտնվում ե լորձուհւք:

Յեթե վորոշված ե կովը զուգավորել, ապա այդ բանն իս-  
կույն պետք ե անել՝ յերբ նկատվեն ցանկության առաջին նշան-  
ները, վորովհետև ցանկությունը տևում ե ընդամենը 24—36  
ժամ: Այն դեպքում, յեթե կովը ցանկության ժամանակ չի  
զուգավորվում կամ զուգավորվում ե, բայց վորևե պատճառով  
չի հղիանում, ցանկությունը հայտնվում ե նորից յուրաքան-  
չյուր 20—24 օրը մի անգամ: Փորձը ցուց ե տալիս, վոր կովն  
ամենից լավ հղիանում ե առաջին յերեք ցանկությունների ժա-  
մանակ:

Իսկ թե յերբ պետք ե զուգավորել կովը, դա պետք ե յեղ-  
նել տնտեսական նկատառումներից, այսինքն՝ նայած, թե յերբ  
ե ամենից շահավետ կովի ծնելը:

Կովի հղիությունը շարունակվում ե 275—280 օր: Արու  
հորթին կովը մի քանի օր ավելի յե կրում իր արգանդում, քան թե  
եզ հորթին: Իմանալով կովի զուգավորման ժամանակը, դժվար  
չե վորոշել և նրա ծնելու ժամանակը:

Յեթե կովը զուգավորեն առաջին ցանկության ժամանակ,  
այսինքն՝ ծնելուց 3 շաբաթ հետո, ապա նա կկլթվի ընդամենը  
260—270 օր: Նրա տարեկան կաթնատվությունը համեմատա-  
բար նույնպես քիչ կլինի, վորովհետև վաղաժամ հղիությունը  
ծնելուց արդեն մի քանի ամիս հետո կազդի կաթնատվության  
վրա: Գործին այս տեսակետից նայելով, կովին պետք ե զու-  
գավորել յերրորդ ցանկության հայտնվելու ժամանակ:

Այնպես ե լինում, վոր կովը ծնում ե կոլխոզնիկի համար  
անհարմար ժամանակ. որինակ՝ ձմրան ցուրտ ամիսներին, յերբ  
լավ կեր չի պատրաստված կամ գոմը բավականաչափ տաք չե,  
կամ, ընդհակառակը, լինում ե, վոր կովը ծնում ե գարնանը,  
յերբ ընդհանրապես շուկայում բավական կաթ կա, իսկ կոլ-  
խոզնիկին կաթն անհրաժեշտ ե՝ յերեխաներին սնելու համար  
ձմեռ ժամանակ: Այսպիսի դեպքում կովի ծնելու ժամանակը  
պետք ե մի կերպ փոխել:

Ծնելու ժամանակը կարելի յե յերկու ձևով փոխել. կամ  
զուգավորել կովը հենց առաջին ցանկության ժամանակ, կամ  
զուգել մի քանի ցանկություններ:

Որինակ, կովը ծնում ե ապրիլի 15-ին, իսկ ցանկալի յե  
շատ կաթ ունենալ հենց աշնանն ու ձմռանը: Յեթե կովը զու-  
գավորեն հենց առաջին ցանկության ժամանակ, այսինքն՝ մո-  
տավորապես մայիսի 5-ին, ապա նրա ծնելը պետք ե սպասել  
մոտավորապես փետրվարի 10-ին: Ծնելու ժամանակի այդպիսի  
փոխելը տվյալ դեպքում անհարմար ե, իսկ յեթե մենք կովի  
զուգավորումը պահենք մինչև սեպտեմբեր, այն ժամանակ  
ապագա ծնունդը կլինի հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին  
և կոլխոզնիկի ընտանիքն աշնանն ու ձմռանը կաթ կունենա:

Յեթե ծնելու ժամանակը պետք ե փոխել հետևյալ տարին,  
ապա կովը պետք ե զուգավորել յերրորդ ցանկությունն ար-  
տահայտվելիս:

Բորովին միևնույնը չե, թե ինչպիսի ցուլ ե զուգավորում  
կովին: Կաթնատվությունն, ինչպես և մյուս հատկանիշներն  
անցնում են հորթին ժառանգաբար թե մորից և թե հորից:  
Յեթե լավ կլթան կովը զուգավորվի առաջին պատահած ցուլի  
հետ, վորը ծնվել ե վոչ ցեղական սակավ կաթնավետ կովից,  
այն ժամանակ կարող ե պատահել, վոր հորթը ժառանգի հենց  
հայրական սակավ կաթնատվությունը և հետագայում վատ կով  
լինի: Չե վոր աճող հորթը կամ փոխարինելու յե իր պառավ  
կովին կամ նրան գնելու յե կովագուրկ կոլխոզնիկը: Դրա հա-  
մար պետք ե աշխատել կովը զուգավորել միայն լավ ցեղական  
ցուլի հետ:

Կովը զուգավորելու համար պետք ե տանել մոտակա կաթ-  
նապրանքային ֆերման: Յյուրաքանչյուր ֆերմայում կան հա-  
տուկ շովված 1—2 ցուլեր կոլխոզնիկների անհատական կովե-  
րին սպասարկելու համար: Աճող հորթի ծագման մասին ապա-  
ցույց ունենալու համար, ֆերմայի վարիչից պետք ե տեղեկանք  
վերցնել, թե կովն ինչպիսի ցուլի հետ և յերբ ե զուգավորվել:

Կարող ե պատահել և այսպիսի դեպք, յերբ կոլխոզնիկն  
անհատապես ոգտագործում ե այնպիսի լավ կով, ինչպիսին չկա  
կոլխոզային կաթնապրանքային ֆերմայում: Յեթե այդպիսի  
կովը զուգավորեն լավ ցուլի հետ և այդ մասին տեղեկանք վերց-  
նեն, ապա կոլխոզն իր ֆերմայի համար կոլխոզնիկից մեծ ցան-  
կությամբ կգնի վոչ միայն եզ հորթը, այլև արու հորթը:

Գործն ինքն ե ասում, վոր կոլխոզնիկը հաշիվ պահի, թե իր  
կովը տարեկան վորքան կաթ ե տալիս: Դրա համար բավական  
ե ամիսը յերեք անգամ, յուրաքանչյուր ամսի 5, 15, 25-ին  
չափել և գրել կաթն արտադրության քանակը: Յեթե այդ յերեք կաթնատ-  
վությունները կաթն արտադրության մապատկենք 10. ով (զուգա-

1008  
36182





րած թվի վրա ավելացնենք մեկ դերո), ապա կստանանք կովի ամսական կաթնատվությունը: Այսպես ամսե ամիս վորոշելով կաթնատվությունը, կվորոշվի և կովի տարեկան կաթնատվությունը:

### ՀՂԻ ԿՈՎԻ ԽՆԱՄԲԸ

Իմանալով կովի զուգավորման ժամանակը, պետք է վորոշել նրա ծնունդը: Դա անհրաժեշտ է նրա համար, վոր ճիշտ իմացվի, թե յերբ պետք է կովի կթելը դադարեցնել, իսկ ծնունդից առաջ կովին վորոշ հանգիստ տալը միանգամայն անհրաժեշտ է: Հղիության վերջին ամիսներին հորթն արգանդում զարգացնելու համար շատ սննդաբար նյութեր են պահանջվում: Յեթե կովն այդ ժամանակ կթեն, ապա կերից ստացված սննդաբար նյութերի զգալի մասը կգնա կաթ պատրաստելու համար և դրանով արգանդի հորթը կզրկվի նրանից: Պարզ է, վոր այդ պայմաններում հորթը չի կարող կանոնավոր զարգանալ:

Ծննդից առաջ կթելը վատ է անդրադառնում կովի հետագա կաթնատվության վրա: Ծնունդը մոտենալու ժամանակ կովի կուրծքում մեծ փոփոխություններ են առաջանում: Ինչպես հայտնի յե, առաջին որերը կուրծք պատրաստում է դալ և միայն 4—5 որ անցնելուց հետո կովն սկսում է կանոնավոր կաթ տալ: Յեթե կովը կթեն մինչև ծնելը, ապա կուրծի փոփոխությունները կատարվում են անկանոն կերպով և կուրծք հանգիստ չըստանալով, ավելի վատ է աշխատում: Փորձը ցույց է տալիս, վոր յեթե կովը կթեն մինչև ծնելը, ապա նրա ապագա արեկան կաթնատվությունը կպակասի մոտավորապես մի քառորդի չափ, քան թե յերբ նա ծնելուց առաջ ստանա կանոնավոր հանգստություն:

Ցանկալի յե կովին հանգիստ տալ (դադարեցնել կթելը) 5—6 շաբաթվա ընթացքում: Հանգստի տևողությունը պետք է սահմանել՝ նայած պայմաններին: Յեթե կովը առողջ է, լավ մարմին ունի, ապա 4 շաբաթվա հանգիստը նրան բավական է: Հիվանդ, նիհար և առաջին ծնունդն ունեցող կովերի հանգստությունը պետք է ավելացնել մինչև 6—8 շաբաթ:

Այն դեպքում, յերբ ժամանակն է կովին հանգիստ տալ, իսկ նա դեռ տալիս է 2—3 լիտր կաթ, պետք նրան բռնի կերպով հանգիստ տալ: Դրա համար կովին պետք է կերակրել վատ կերով և փոխանակ յերկու անգամի, որական կերակրել միայն մի անգամ: Մի քանի որից հետո, յերբ կաթնատվությունը

զգալի կերպով կկրճատվի, պետք է կթել որ մեջ և յեթե նա մի լիտրից ավել կաթ չի տալիս, բոլորովին դադարեցնել կթելը:

Հղի կովը պահանջում է լավ ինամբ: Նրան պետք է պահպանել վնասվելուց և ամեն որ լավ մաքրել խոզանակով: Տակի փոքր պետք է այնպես առատ և չոր անել, վոր կովի հետևի վոտներն առջևի վոտների հետ նույն մակարդակի վրա գտնվեն:

Հղի կովին անպայման պետք է ման ածել: Մինչև անգամ ձմեռվա վատ յեղանակներին նրան պետք է բակը դուրս բերել 2—3 ժամով: Յեթե կովը քիչ է ման դալիս, ապա ոգտակար է նրան վորոշ ժամանակ ման ածել: Դա հատկապես պետք է այն դեպքում, յերբ կովի կուրծք սաստիկ ուռչում է: Ման ածելը նրանով է շատ ոգտակար, վոր շարժման մեջ է դնում կովի մարմնի հետևի մասում կանգնած արյունը: Իսկ արյունը նրա համար է կանգնում, վոր աճող հորթը ճնշում է այդ տեղից անցնող արյունատար անոթները (յերակները) և դժվարացնում է նրա կանոնավոր շարժումը:

Կովը պետք է ջրել բարեխառն ջրով, վորովհետև սառը ջրից հետո կովը կարող է վիժել:

Հղի կովին պետք է կերակրել այդ բանի համար հատկացված լավ կերով: Չի կարելի վոչ մի դեպքում տալ մզլած, փտած, ցրտահար յեղած կեր, վորովհետև նրանից նույնպես կովը կարող է վիժել: Թե ինչքան և ինչպես կեր պետք է տալ հղի կովին, ցույց է տրված հաջորդ գլխում:

Յերբեմն ծնելուց առաջ պտուկներից կաթ է դուրս գալիս, իսկ կուրծք սաստիկ ուռչում է: Այսպիսի դեքում կովը պետք է կթել որական 2—3 անգամ:

### ԽՆԱՄԲԸ ԾՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Կովի ծննդաբերությունն ավելի դժվար է ընթանում, քան ձիունը և մյուս կենդանիներին: Ծնելու ժամանակ շատ հաճախ պետ է ոգնել նրան, հատկապես յերինջներին: Դրա համար էլ ծննդաբերությունից առաջ պետք է ավելի հաճախ այցելել գոմը:

Մոտալուտ ծննդաբերության նշանները հետևյալներն են.

1. Կուրծք շատ է ուռչում և պտուկները ձգվում, առաձգական են դառնում:
2. Պոչի յերկու կողմը գանվող փոսերն ավելի յեն խորանում:



3. Հեշտոցի շրթունքները սաստիկ ուռչում են և նրանցից լորձուկ է հոսում:

Հենց վոր վերոհիշյալ նշանները յերևան, պետք է կովին պատրաստել ծնելու, այն է — հետևել, սեռական գործարանները և պոչը լավ լվանալ տաք մոխրաջրով և լավ սրբել: Տակը պետք է փոել չոր և մաքուր ծղոտ:

Ծնելու ժամանակ կովին պետք է ոգնել միայն այն դեպքում, յերբ ծննդաբերությունը սխալ ընթանա: Իսկ յերբ ծննդաբերությունը ճիշտ է ընթանում, հորթը վաղորոք դուրս քաշելը շատ անգամ փաստակար է:

Ծնելն սկսում է նրանով, վոր հայտնվում է հորթը պատող թխագույն փամփուշտը: Այդ փամփուշտը պատվում է և



Նկ. 7.  
Հորթի միշտ դուրսը.—  
հորթը դուրս է գալիս յետև-  
վով, վոտները ծալված:



Ծնելու ժամանակ հորթի  
միշտ դուրսը: Հորթը  
դուրս է գալիս տաքովի  
վոտներով:

նրանից մեծ քանակությամբ դուրս է թափվում դեղին հեղուկ: Այնուհետև հայտնվում է հորթը պատող յերկրորդ բաց գույնի փամփուշտը, լցված բաց գույնի լորձահեղուկով:

Կանոնավոր ծննդաբերության ժամանակ, հենց վոր հորթը պատող փամփուշտների շրերը հոսում են, իսկույն հայտնվում են հորթի վոտները: Վոտների դիրքից կարելի յե վորոշել, հորթը ճիշտ է գալիս, թե վոչ:


Ամենից հաճախ հորթը դուրս է գալիս առջևի վոտներով, վորոնց վրա դրված է գլուխը (տես նկ.): Ծնելը հաջող է անցնում և այն դեպքում, յերբ հորթը դուրս է գալիս և հետևի վոտներով, բայց մեջքը վեր դարձած: Բայց և այնպես այդ դիրքով ծնելն ավելի դժվար է, և պետք է ոգնել կովին հորթը դուրս քաշելու:

Հորթի կծղակներից կարելի յե վորոշել, թե նա ինչպես է դուրս գալիս: Յեթե հորթն առջևով է դուրս գալիս, ապա նրա կծղակների ներբանները դարձած են ներքև: Իսկ յեթե հորթը ճիշտ, բայց հետևով է դուրս գալիս, ապա կծղակների ներբանները դարձած են վեր:

Պետք է ոգնել նաև այն դեպքում, յերբ գլուխը շուռ է գալիս կողքի կամ վոտը վորտվում է:

Նախքան կովին ոգնելը, պետք է ձեռների յեղունգները տակից կտրել և ձեռները լավ լվանալ սապոնով կամ մոխրաջրով: Այնուհետև ձեռքին վազելին կամ յուղ քսելով զգուշությամբ մտցնել կովի անցքը և շոշափելով վորոշել հորթի դիրքը:

Յեթե պարզվի, վոր գլուխը թեքվել է կողքի, ապա հորթը պետք է քիչ հետ հրել դեպի արգանդը և ուղղել գլխի դիրքը:



Նկ. 8 Հորթի անկանոն դուրսը.— գլուխը մի կողմ է ծալված: Առանց մարդու ոգնության, կովը չի կարող ծնել:

Յեթե ոգնություն հասցնողին չի հաջողվում այդ անել, պետք է շտապել անասնաբուժին կանչելու:

Հաճախ այնպես է լինում, վոր հորթը, բոլորովին ճիշտ դրությամբ է, բայց ծնունդը ձգձգվում է: Որինակ, դա այն դեպքերում է լինում, յերբ հորթը մեծ է, կամ կովը թույլ է և յերկունքն այնքան ուժեղ չի լինում, վորպեսզի հորթին դուրս մղի: Այդպիսի դեպքում կովին պետք է ոգնել: Հորթի վոտներից պետք է քաշել միայն այն դեպքում, յերբ կովը չարչարվում է: Քիչ ներքև պետք է քաշել, վորպեսզի գլուխը հեշտությամբ դուրս գա:



Հենց վոր հորթը ծնվում է, իսկույն նրա քիթն ու բերանը պետք է մաքրել լորձուկներից: Յեթե այդ շարվի, շնչելիս լորձուկը կարող է ընկնել թոքերը և հիվանդացնել հորթին:

Դրանից հետո պետք է մասնորոշ սեղմել պորտը՝ սկսած նրա արմատից (հորթի փորի կողմից), դուրս հանել միջի արյունը և արմատից 5—6 սանտիմետր հեռավորության վրա (ձեռքի ափի լայնությամբ) ամուր կապել պորտը՝ կանեփի յեփ աված բարակ թելով: Պորտի մյուս մասը պետք է կտրել, իսկ մնացած մասին քսել վորևե հականերխիչ նյութ՝ յոդ, կրեոլին, բրոմֆերրոն և այլն:

Յեթե կովը վարժվել է կթվել առանց հորթի, ապա կարելի յե նրան տալ կովին լիզելու: Նա լավ լիզում է ամբողջ լորձուկը և լավ տրորում է հորթի մարմինը: Իսկ յեթե կովը կթվել է հորթի միջոցով և ուզում են նրան վարժեցնել կթվելու առանց հորթի, ապա հորթին անմիջապես պետք է հեռացնել և սրբել՝ մինչև չորանալը:

Ծնելուց հետո կովին իսկույն պետք է լավ տրորել ծրդոտի հյուսվածքով, կուրծքը լվանալ տաք ջրով և սրբելով չորացնել: Տարվա ցուրտ յեղանակին պետք է նրան ծածկել քաթանով:

Յերկու ժամ հետո նրան պետք է տալ տաք ջուր: Մի անգամից պետք է տալ կես դուլից վոչ ավել, իսկ ընդհանուրապես առաջին օրը պետք է տալ մի դուլ ջրից վոչ ավել:

Առաջին անգամ ջրելուց հետո սկսում են առաջին կիթը: Առաջին 7—10 օրը կովին պետք է կթել որական 4 անգամ: Այդ պետք է նրա համար, վորպեսզի հորթն որական 4 անգամ տաք դալ ստանա և վորպեսզի կուրծի ուռուցքը շուտ անցնի և սկսի նրա կանոնավոր աշխատանքը:

Ծնելուց հետո պետք է հետևել, արդյոք արբանք դուրս յեկե՞լ է, քե՞ վոչ: Սովորաբար սրբանը դուրս է գալիս ծնելուց 4—6 ժամ հետո: Ծեր, ուժասպառ կովերի սրբանը հաճախ ուշանում է: Յեթե սրբանը մի օրվա ընթացքում դուրս չգա, պետք է անմիջապես հրավիրել անասնաբուժին, վորպեսզի նա հեռացնի: Զի կարելի այդ բանն ուշացնել: Արգանդում մնացած սրբանը արագ նեխում է և հիվանդացնում, յերբեմն ել սպանում է կովին:

Առաջին 3—4 օրը բացի լավ, առատ խոտից, կովին ուրիշ բան չպետք է տալ, մինչև կուրծի ուռուցքն իջնի և նա (կուրծք) սկսի կանոնավոր աշխատել: Դրանից հետո միայն կարելի յե տալ ուժեղ և հյութալի կեր:

### ՄԻՆՉԵՎ 3 ԱՄՍԱԿԱՆ ՀՈՐԹԻ ԿԵՐԱԿՐԵԼՔ\*

Առաջին օրը հորթի համար դժվար է տաքացնել իր մարմինը, դրա համար նրան պետք է սեղափոխել սաֆ շենֆ յեվ պահպանել միջանցուկ ֆավիներից:

Հենց վոր հորթը չորանա և վոտի կանգնի (ծնվելուց 2—3 ժամ հետո), նրան պետք է տալ 2—3 բաժակ կթած տաք դալ: Առաջին անգամ հորթին կարելի յե խմցնել մատի ոգնությամբ: Խմեցնելուց հետո հորթի բերանը պետք է չոր սրբել մաքուր շորով: 4—5 ժամ հետո հորթին նորից են տալիս 3—4 բաժակ նոր կթած դալ: Առաջին 7 օրը նրան պետք է տալ որական 4 անգամ նոր կթած, դեռ չստուած դալ՝ մոտավորապես մի-մի լիտր (4 բաժակ): Զի կարելի խմեցնել տաքացրած դալ:

Ութ օրից հետո հորթին սկսում են կերակրել որական յերեք անգամ և դալի քանակությունն ավելացնում են մինչև 1,5 լիտր (ամեն անգամ տալիս են 5—6 բաժակ): Չպետք է թողնել, վոր հորթը միանգամից խմի իր ամբողջ բաժինը, այլ 3—4 անգամից տալով մի-մի ըոպե ընդմիջում: Խմեցնելուց հետո հորթի դունչը պետք է սրբել մաքուր շորով, հակառակ դեպքում նրա դնչի մազերը կթափվեն:

10 օրեկանից մինչև յերկու շաբաթ հասակը միջին հաշվով հորթին պետք է տալ որական 5 լիտր անարատ կաթ: Յերրորդ շաբաթվա ընթացքում որական պետք է տալ 5,5 լիտր: Չորրորդ շաբաթվա ընթացքում անարատ կաթը փոխարինում են քաշած կաթով, մոտավորապես հետևյալ ձևով. առաջին օրը տալիս են 4—5 լիտր անարատ և կես լիտր քաշած կաթ, յերրորդ օրը տալիս են 3,5 լիտր անարատ և 1,5 լիտր քաշած կաթ, յերրորդ օրը — 2,5 լիտր անարատ և 2,5 լիտր քաշած, չորրորդ օրը — 1,5 լիտր անարատ և 3,5 լիտր քաշած կաթ, հինգերորդ օրը — կես լիտր անարատ և 4,5 լիտր քաշած, իսկ վեցերորդ օրը 5 լիտր քաշած կաթ:

Ամբողջ հինգերորդ շաբաթվա ընթացքում պետք է տալ որական 5 լիտրից վոչ պակաս քաշած կաթ: Վեցերորդ շաբաթվա ընթացքում պետք է կաթ տալն ավելացնել մինչև 6 լիտր: Յոթերորդ շաբաթվա ընթացքում պետք է տալ որական 6 լիտր, ութերորդ շաբաթվա ընթացքում որական 5 լիտր, իններորդ,

\* Թե ինչպես պետք է կերակրել և խնամել 3 ամսից ավելի հասակ ունեցող հորթերին, այդ մասին ասվում է յերկրորդ մասում — «Հորթերի աճեցնելը» վերնադրով, սես էջ 38:



տասներորդ և տասնմեկերորդ շաբաթների ընթացքում որական 4 լիտր, 12-րդ և 13-րդ շաբաթների ընթացքում որական 2 — 2,5 լիտր:

Քաղաժ կաթը պետք է բուլորովին մաքուր լինի և առաջին յերկու ամիսը մինչև խմեցնելը պետք է 35 աստիճան (Յելսիուսի) տաքացնել: Յերկու ամսական լինելուց հետո, հորթին կարելի յե կաթ տալ միայն 20 — 25 աստիճան տաքացրած:

5-րդ շաբաթից սկսած հորթին քիթ քիչ պետք է տալ ուժեղ կեր, որինակ, թևի, գարու և վարսակի մանրած հատիկ: Այդ կերերն սկզբում պետք է տալ 100-ական գրամ (մի քառորդ ֆունտ), հետո հետո ավելացնելով մինչև 400 գրամ:

Արդեն յերրորդ շաբաթվանից պետք է հորթին խոտ տալ: Խոտ տալն անհրաժեշտ է վոչ այնքան սնունդն ուժեղացնելու համար, վորքան նրա ստամոքսը կուպիտ կերի վարժեցնելու համար: Խոտը տրվում է առատորեն:

Ավելի լավ է հորթին պահել ցանկապատի մեջ, ապահովելով նրա տակը բավականաչափ փուռցով:

Չմեռ ժամանակ 2 — 3 ամսական հորթերին պետք է պա- ել 8 — 10 աստիճան ջերմություն ունեցող շենքում:

### ԿՈՎԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

«Կովի կաթը լեզվի վրա յե», — ասում է առածը: Բուրն ել հասկանում են, վոր կովին ինչպես կերակրես, այնպես ել կկթես: Սակայն դրանից չի հետևում, վոր շատ կաթ ստանալու համար պետք է լավ կեր շատ տալ: Գործնական կյանքը ցույց է տվել, վոր կովի միակերպ առատ կերակրելն այնքան ել չի նպաստում բարձր կաթնատվությանը:

Ճիշտ կերակրել կովին, դա նշանակում է այնքան և այնպիսի կեր տալ նրան, վոր նա չնիհարի, չչաղանա և միևնույն ժամանակ ամենաբարձր կաթնատվություն ունենա: Ինչպես չափից ավելի, այնպես ել չափից պակաս կերակրելը կովի համար վնասակար է: Չափից պակաս կերակրելն առաջին հերթին ազդում է կովի կաթնատվության վրա: Կերը բավականանում է միայն կովի որգանիզմի գոյությունը պահպանելու համար, իսկ կաթ ստանալու համար հումութը չի բավականանում և կերը զուր տեղը կորչում է:

Չափից ավելի կերակրելիս, կովն ստանում է այնքան կեր, վոր չի կարող նրան կաթ դարձնել, այդ պատճառով կերի մի մասը մնում է առանց ոգաագործելու և դուրս է գալիս աղբի

հետ միասին, իսկ մի մասը գնում է ճարպ պատրաստելու համար, մի բան, վոր ամեն անգամ ոգտակար չի լինում:

Կովերը լինում են տարբեր վորակի: Նրանցից մի քանիսը չեն կարող շատ կաթ տալ, ինչքան ել վոր լավ կերակրես: Նույն- իսկ միևնույն կովը տարբեր ժամանակներում տալիս է տարբեր քանակությամբ կաթ, որինակ՝ ծնելուց անմիջապես հետո և ցամաքելուց առաջ: Պարզ է, վոր չի կարելի միատեսակ կերակրել այն կովերին, վորոնցից մեկը տալիս է 10 կլիո կաթ, իսկ մյուսը 3—4 կլիո:

Ճիշտ այդպես ել սխալ կլինի, յեթե 300 կլիո կենդանի քաշ ունեցող կովին տան այնքան կեր, ինչքան 500 կլիո քաշ ունեցող կովին:

Փորձերի միջոցով գտնված է այն ձևը, վորով կարելի յե ճիշտ կազմել յուրաքանչյուր կովի որական կերակրի չափը, համաձայն նրա կաթնատվության ու կենդանի քաշի:

Կերի այն մասը, վորն անհրաժեշտ է կենդանուն իր մարմինը նորմալ գրության մեջ պահելու համար, կոչվում է պահպանող կեր: Ինչքան կենդանին խոշոր է, այնքան նրա համար շատ է պահանջվում պահպանող կեր:

Ըստ սննդարարության՝ կերերը լինում են շատ տարբեր: Ինչպես հաշվել, թե այս կամ այն կերից ինչքան պետք է վերցնել: Դրա համար սահմանված է չափ — կերի միավոր, վորի համեմատությամբ վորոշվում է յուրաքանչյուր սննդարար ուժը: Փորձի միջոցով գտել են, վոր 1 կլիոգրամ վարսակի սննդարարությունը հավասար է 3 կլիոգրամ խոտի, 4 կլիոգրամ գարնանացանի հարզի, 8 — 10 կլիոգրամ կերի ճակնդեղի սննդարարությանը և այլն: Այդ հիման վրա յել կազմված է հետևյալ աղյուսակը:

Կերի անունը Կերային մի միավորին քանի կլիոգրամ կեր է գալիս

Արևածաղկի քուսպ . . . . .	1
Յորենի թեփ . . . . .	1 — 1 1/4
Գարու ալյուր . . . . .	3/4
Յեզիպտացորենի ալյուր . . . . .	3/4
Մարգագետնի խոտ . . . . .	3
Սեզ և սուդանի խոտ . . . . .	2
Սուվույա և յերեքնուկ . . . . .	3
Գարու ծղոտ . . . . .	3 — 3 1/2
Յորենի ծղոտ . . . . .	5



Յորենի մղեղ . . . . .	2 1/2
Յեզիպտացորենի սիլոս . . . . .	6
Կերի ճակնդեղ . . . . .	9

Կեր տալու չափերը կազմելիս այդպիսի աղյուսակ պետք է միշտ ունենալ ձեռքի տակ: Այդ աղյուսակը ցույց է տալիս կերերի մոտավոր անդարարութունը, վորովհետև կերերի անդարարութունը շատ մեծ կախում ունի նրանց հավաքելու ժամանակից, ճիշտ պահելուց և այլն:

Համաձայն այդ աղյուսակի, 1 կիլոգրամ թեփով կարելի յե փոխարինել 3 կիլոգրամ դաշտի խոտ կամ 6 կիլոգրամ սիլոս տալը և այլն: Բայց դա ճիշտ կլինի միայն կուշտ կերակրելիս: Ջահել անասունները կերակրելիս 1 կիլոգրամ թեփով և 6 կիլոգրամ սիլոսով կերակրվողները միատեսակ չեն աճում կամ կըրվող կովերը միատեսակ կաթ չեն տալիս:

Յերևում է, վոր այդտեղ մեծ դեր է խաղում կերի հիմնական մասերից մեկը — սպիտակուցային նյութերը:

Սպիտակուցային նյութերն անհրաժեշտ են կենդանու մարմնի վերանորոգման համար, աճման և հասկապես կար պահպանելու համար: Յեթե կերի մեջ պակասեն սպիտակուցային նյութերը, այն ժամանակ մինչև անգամ մյուս նյութերի առատության դեպքում կովը կպակասեցնի կաթնատվութունը: Հետևաբար կեր տալու չափը կազմելիս անհրաժեշտ է նույնպես իմանալ, ինչքան և ինչպիսի կերերում կան սպիտակուցային նյութեր: Յեվ նրանցից ինչքան է հարկավոր կովի համար:

Ջանազան կերերի յուրաքանչյուր կիլոգրամում պարունակվում են հետևյալ քանակությամբ սպիտակուցային նյութեր.

Արևածաղկի քուսպ . . . . .	300	գրամ
Յորենի թեփ . . . . .	110	»
Վարսակ . . . . .	70	»
Գարու ալյուր . . . . .	60	»
Յեզիպտացորենի ալյուր . . . . .	70	»
Հանդի խոտ . . . . .	30	»
Սեղ և սուղանի խոտ . . . . .	50	»
Աովույտ և յերեքնուկ . . . . .	100	»
Գարու ծղոտ . . . . .	10	»
Յորենի ծղոտ . . . . .	10	»
Յեզիպտացորենի սիլոս . . . . .	3	»
Կերի ճակնդեղ . . . . .	1	»

Սպիտակուցային նյութերով ամենից հարուստ են — Բուսար, քեփերը յեվ յերեքնուկի խոտը:

Փորձի միջոցով գտել են, վոր 200 կիլոգրամ կենդանի քաշ ունեցող խոշոր յեղջյուրավոր անասունին անհրաժեշտ է 500 կգ սպիտակուց կերի 2 յեվ կես կերային միավոր: Այդ կերը պետք է պարունակի վոչ պակաս, քան 100 գրամ սպիտակուցային նյութեր: 200 կիլոգրամից ավել յեղած յուրաքանչյուր 50 կիլոգրամ կենդանի քաշի համար պահպանող կերին պետք է ավելացնել մի քառորդ միավոր, իսկ սպիտակուցային նյութերը 25 գրամ: Ավելի պարզ է ոգտվել հետևյալ աղյուսակով.

Կենդանի քաշը կիլոգրամներով	Պահանջվող կերային միավորների քանակը	Անհրաժեշտ է սպիտակուց գրամներով
200	2 1/2	100
250	2 3/4	125
300	3	150
350	3 1/4	175
400	3 1/2	200
450	3 3/4	225

Ունենալով այդպիսի ցուցումներ, կարելի յե կաթից կտրած կովի համար կազմել նորմա: Որինակ, յենթադրենք, կովը քաշում է 300 կիլոգրամ: Աղյուսակով գտնում ենք, վոր նրան պետք է տալ կերի յերեք միավոր 150 գրամ սպիտակուցային նյութերով:

Յեթե նրան տանք 7 կիլոգրամ զարու ծղոտ և 2 կիլոգրամ հասարակ սեղ, ապա, համաձայն կերի աղյուսակի, դա կկազմի հենց կերի յերեք միավոր: Ծղոտը կպարունակի իր մեջ 70 գրամ սպիտակուցային նյութեր, իսկ խոտը 100 գրամ, ընդամենը — 170 գրամ:

7 կիլոգրամ ծղոտ — 2 կերի միավոր — 70 գրամ սպիտակուց  
2 » խոտ — 1 » » — 100 » »


3 կերային միավոր 170 գրամ սպիտակուց

Նշանակում է, սպիտակուցային նյութերը միանգամայն բավական կլինեն:

Կենդանի քաշը կարելի յե վորոշել չափելով: Դրա համար պետք է առաջնորդվել հետևյալ կանոններով: Կենդանուն պետք է կանգնեցնել հարթ տեղում. նրա առջևի և հետևի վրաները վոչ պետք է ծալվեն, վոչ էլ հետ ընկած լինեն. կենդանին պետք



ե կանգնի ազատ, առանց կախելու և բարձրացնելու գլուխը՝ պետք է չափել առավոտյան կերակրելուց և ջրելուց առաջ: Չափելու միջոցով կենդանի քաշը վորոշելու մի քանի ձևեր կան, բայց ամենահասարակը — դա Տրուխանովսկու ձևն է: Այդ ձևով սանտիմետրի սովորական ժապավենով չափում են մեջքի յերկարությունը վզի բարձր մասից մինչեմ պոչարմատը յեմ



Նկ. 9. Նկարում ցույց է տրված, թե ինչպես պետք է չափել կովը՝ նրա կենդանի քաշը իմանալու համար:

կրծի քաղապասը թիակների հետեմից: Ստացած թվերը կրկին բազմապատկում են, իսկ արտադրյալը բազմապատկում են յերկուսով:

Ստացած թիվը բաժանում են 100-ի: Պատասխանը կլինի հենց կենդանու քաշը կիլոգրամներով: Յենթադրենք, իրանի յերկարութունը 130 սանտիմետր է, իսկ կրծքի շրջապատը 170 սմ: Այդ թվերի բազմապատկումից կստանանք 22.100. բազմապատկելով այդ թիվը յերկուսով, կստանանք 44.200: Բաժանելով 100-ի, վորի համար պետք է դեն ձգել վերջին յերկու զերոն, կիմանանք, վոր կովի քաշը 442 կիլոգրամ է:

Կերի այն մասը, վոր գնում է կաթ պատրաստելու համար, կոչվում է մթերային կեր: Մթերակերի քանակը կախված է պատրաստվող կաթի քանակից, այսինքն կաթնատվությունից: Գտել են, վոր յուզալի կաթ պատրաստելու համար, ինչպես սովորաբար տալիս են մեր հասարակ կովերը, պահանջվում է կերի մի միավոր, յուրաքանչյուր 2<sup>1</sup>/<sub>2</sub> կիլոգրամ կաթի համար: Բացի այդ, մթերային կերը պետք է պարունակի սպիտակուցային

նյութեր վոչ պակաս, քան 50 գրամ—յուրաքանչյուր կիլոգրամ կաթի համար: Որինակ, յեթե կովը տալիս է 10 կիլոգրամ կաթ, բացի պահպանող կերից պետք է տալ 4 միավոր մթերային կեր՝ 500 գրամ սպիտակուցային նյութերով:

Որինակ, պետք է կազմել կեր տալու չափ 400 կիլոգրամ քաշ ունեցող կովի համար, վորը տալիս է 4 կիլոգրամ կաթ: Աղյուսակով գտնում ենք, վոր պահպանող կեր պետք է տալ 3<sup>1</sup>/<sub>2</sub> կերի միավոր 200 գրամ սպիտակուցով:

2<sup>1</sup>/<sub>2</sub> կիլոգրամ կաթի համար պետք է տալ կերի մի միավոր, իսկ 5 կիլոգրամի համար յերկու անգամ ավելի — կերի 2 միավոր: Մի կիլոգրամ կաթի համար պետք է տալ 50 գրամ սպիտակուց, իսկ 5 կիլոգրամի համար պահանջվում է 50 գրամ բազմապատկած 5 անգամ — 250 գրամ:

Ընդամենը կովին պետք է տալ —

Պահպանող կեր — 3 <sup>1</sup> / <sub>2</sub> միավոր . . .	200 գրամ սպիտակուց
Մթերային կեր — 2 » . . .	250 » »

5<sup>1</sup>/<sub>2</sub> կերի միավոր 450 գրամ սպիտակուց

Յենթադրենք, կուտնտեսականն ունի գարու ծղոտ, մի քիչ սեզ, ճակնդեղ և թեփ: Առաջին հերթին պետք է տալ կուպիտ և հյութալի կեր, ինչքան վոր թույլատրվում է, իսկ ինչ վոր պակասի, ավելացնել ուժեղ կերից:

300—400 կիլո քաշ ունեցող կովին կուպիտ կեր պետք է տալ վոչ պակաս, քան 8—10 կիլոգրամ, այլ կերպ կովը սոված կմնա, և նրա ճիշտ մարսողությունը կխախտվի: Կուպիտ կերի ավելի լինելը նույնպես ոգտավետ չի, վորովհետև այդ դեպքում վատանում է կերի ոգտագործումը:

Կեր տալու չափը կարելի յե հետևյալ կերպ կազմել.

3 <sup>1</sup> / <sub>2</sub> կիլո գարու ծղոտ 1 կերի միավոր	35 գրամ սպիտակուց
8 » կերի ճակնդեղ 1 » »	1 » »
4 » հասարակ սեզ 2 » »	200 » »
2 » թեփ 2 » »	220 » »

6 կերի միավոր 456 գրամ սպիտակուց

Կարելի յե չափը կազմել և ուրիշ կերերից, որինակ, ճակնդեղի փոխարեն տալ սիլոս, ծղոտի փոխարեն՝ մզեղ և այլն, բայց անպայման պետք է հետեմել, վոր սպիտակուցի քանակը կերի մեջ բավարար լինի: Յեթե այս բանը չպահենք, սպա կաթնատվությունը կպակասի և կերի մի մասը զուր կկորչի:



Յեթե հենց այդ որինակում թեփի փոխարեն մենք տանք 5 կիլո ցորենի մղեղ, ապա կերի միավորների քանակի տեսակետից չափը ճիշտ կլինի, նույնիսկ  $1\frac{1}{2}$  միավոր ավել կլինի, քան պահանջվում է:

Մոլոս	3,5	կիլո	1	կերի միավոր	35	գրամ սպիտակուց
Մղեղ	5	»	2	»	50	»
Ճակնդեղ	8	»	1	»	1	»
Պոտ	4	»	2	»	200	»

6 կերի միավոր 286 գրամ սպիտակուց

Սակայն այդ դեպքում սպիտակուցային նյութերը շատ կպակասեն: Թե ինչ կստացվի, դժվար է ստուգել:

400 կիլոգրամ կենդանի քաշ ունեցողի մարմնի վերանորոգման համար պահանջվում է 200 գրամ սպիտակուց: Սպիտակուցի այդ քանակը կովը պետք է ծախսի իր վրա: Իսկ կաթի համար կմնա 86 գրամ (286 գրամ — 200 գրամ = 86): Իսկ մենք գիտենք, վոր կաթի ամեն մի կիլոգրամի համար անհրաժեշտ է 50 գրամ սպիտակուց: Դուրս է դալիս, վոր այդպիսի կեր տալու դեպքում սպիտակուցը բավականացնում է միայն մեկուկես կիլո կաթ պատրաստելու համար: Յեթե կովը վորոշ ժամանակ մեկուկես լիտրից ավելի կաթ տա, ապա դա կլինի իր մարմնի սպիտակուցի վորոշ պաշարի հաշվին:

Առանց թեփի 5 կիլո կաթ ստանալու համար պետք էր կովին կերակրել 9 կիլոգրամ լավ խոտով և 8 կիլոգրամ ճակնդեղով: Իսկ ծղոտով ու հարթով այսպիսի կաթնատվություն յերբեք չի ստացվի: Ահա թե ինչու կթան կովերի համար պետք է բարձր գնահատել սպիտակուցով հարուստ այնպիսի կերերը, ինչպես թեփը, քուսպը, առվույտը:

Հյութեղ կերեր — արմատապտուղներ կամ սիլոս տալը միանգամայն անհրաժեշտ է: Առանց հյութեղ կերերի կովի մարսողությունը կանոնավոր չի ընթանում և կերերը բավականաչափ լավ չեն ոգտագործվում: Դրա համար ցանկալի յե կովին, հատկապես կթվող կովին, թեկուզ քիչ քանակութամբ հյութեղ կեր տալ:

Լավ սիլոս կարելի յե տալ մոտավորապես 16—20 կիլոգրամ, իսկ ճակնդեղ կարելի յե տալ մինչև անգամ 30 կիլոգրամ:

Հյութեղ կերերն այն հաշվով պետք է տալ, վոր նրանք թեկուզ քիչ-քիչ բավականացնեն կովին գոմում մնալու ամբողջ ժամանակ և հատկապես նրանք լինեն կովի ծնելու ժամանակ:

Կթան կովի համար կազմելով կերի չափը, միշտ պետք է հիշել, վոր կովի ունեցած կաթնատվությունն ամեն դեպքում չի համապատասխանում նրա իսկական ընդունակությանը և յեթե նրան ավելի լավ կերակրենք, ապա նա կբարձրացնի կաթնատվությունը: Այդ պատճառով կովի ծնելուց հետո առաջին 3—4 ամիսը պետք է ավելացնել նրա կերը մի միավոր կաթնատվության համար: Յեթե կովը 2—3 որից հետո ավելացնում է կաթը, ապա կերը դարձյալ ավելացնում են, տալով ուժեղ կերեր: Այսպես կովի կաթնատվությունը կարելի յե հասցնել ամենաբարձր չափի, վորից ավել կովը չի կարող կաթ տալ:

Հղի չկթվող կովը կերակրում են համաձայն նրա կենդանի քաշի: Գանի վոր կովի արգանդում հորթի աճելը պահանջում է աննդարար նյութերի վորոշ ծախսում, ապա, բացի պահպանող կերից, հղիության վերջին 3 ամսվա ընթացքում կերը պետք է ավելացնել մի յերրորդ միավոր 100 գրամ սպիտակուցով: Նիհար, ուժասպառ կովերին պետք է դրանից էլ ավելացնել:

Հղի կովի կերերը հնարավորի չափ պետք է զանազան լինեն, վորպեսզի նա այդ կերերից ստանա հորթի լավ զարգացման համար բոլոր անհրաժեշտ նյութերը:

Հղի կովին պետք է կերակրել առատորեն: Չանազան կերերով առատորեն կերակրելը վոշ միայն չի վնասում, այլև չափազանց նպատակահարմար է: Հորթերը ծնվում են լավ զարգացած, ծննդաբերությունը շուտ է կատարվում, հիվաք չկա վախենալու, վոր հորթը կարող է խոշոր լինել և ծննդաբերությունը դժվարանալ: Դիտողությունները ցույց են տալիս, վոր առատ կերակրելու ժամանակ հորթի քաշը լինում է սովորական և կանոնավոր:

Ուրիշ բան է, յեթե կովին սխալ են կերակրել, որինակ՝ միայն հարզով և վարսակով կամ յեզիպտացորենով և նրանք ուղղակի ճարպակալել են: Այդպիսի դեպքում հորթերը ծնվում են թուլակաղամ, փոքր կամ մինչև անգամ մեռած:

Լավ պարարտացրած և հղիության ժամանակ ճիշտ կերակրվող կովի առավելությունն այն է, վոր առաջին 2—3 ամիսը նա կարող է բավական շատ կաթ տալ, քան ծննդաբերության վատ պատրաստված կովը:

Հղի կովի կերը պետք է լինի լավ վորակի: Մզլած խոտը, փչացած սիլոսը կարող են վիժում առաջացնել:

Հենց նոր ծնած կովերին առաջին 3—4 որը բացի լավ առատ խոտից, ուրիշ վոջինչ չպետք է տալ, վորովհետև այդ



ժամանակ նրա կուրծք դեռ կանոնավորված չէ, յերբեմն նույն-  
իսկ ուռած է լինում: Յեթե այդ ժամանակ կովին տանք ուժեղ  
և հյութալի կեր, ապա նրա կուրծք հեշտությամբ կարող է  
բորբոքվել: Միայն կուրծի ուռուցքն իջնելուց հետո, կրկին աս-  
տիճանաբար կարելի չէ ավելացնել ուժեղ ու հյութեղ կեր: Ծը-  
նելուց 10—15 օր հետո միայն պետք է կեր տալը հասցնել  
իր լրիվ չափին:

Կերակրելու կարգը: Կովը վորպես վորոճող կենդանի, վո-  
րոճալու համար պահանջում բավական ժամանակ: Իրա համար  
շատ հաճախ կերակրելը վոչ միայն ոգտակար չէ, այլ վնասա-  
կար է: Ավելի լավ և ճիշտ կլինի որական կերակուրը բաժանե-  
3 մասի և անասունին կերակրել յերեք անգամ: Կերակրելու ամել  
նալավ ժամանակն է առավոտյան ժամի 5—7, ցերեկը 12—2  
և յերեկոյան 6—8:

Կերակուր տալու ժամանակամիջոցները հնարաբավորին չափ  
պետք է միատեսակ լինեն: Կերակրելու վորոշ ժամեր սահմանելով  
պետք է պահպանել այդ ժամերը, վորովհետև կովը սովորում է  
վորոշ կարգի և անհանգստանում է, յեթե խախտվում է այդ  
կարգը: Կովին պետք է կերակրել կթելուց հետո:

Կովերի կերակրելու կարգը հետևյալն է.— առաջին հերթին  
պեճ է տալ ուժեղ կերեր — թեփ, քուսպ, հետո արմատա-  
պտուղներ և դրանից հետո խոտ, ծղոտ և այլն: Յեթե սկզբում  
վատ կեր տրվի, ապա կովը լավ կերին սպասելով, նրանց վատ  
կուտի: Միայն կուտի կերերով կերակրելու ժամանակ, առա-  
վոտ և ցերեկը տալիս են խոտ ու հարթ, իսկ գիշերը ծղոտ:

Ուժեղ կերերը տրվում են չոր գրությամբ կամ կտրատում  
են ու ցանում: Յերը ուժեղ կերերը տրվում են լափի ձևով,  
նրանք ավելի վատ են ոգտագործվում:

Անհրաժեշտ է կովին տալ սովորական այ մոտավորապես  
որական 20—30 գրամ: Ավելի հեշտ է մսուրում դնել քարաղի  
մի կտոր:

Մեծ քանակությամբ սիրոս տալու դեպքում, ոգտակար է  
կովին տալ որական մի ձաշի գդալ կավիճ:

### ԿՈՎԻ ԿԵՐԱԿՐԵԼՆ ԱՐՈՏԱՏԵՂՈՒՄ

Կովին արոտատեղում կերակրելն ամենաառողջարարն է: Արո-  
տում ստացած կերը լավ է մարսվում, թարմացնում և վերա-  
կանգնում է առողջությունը, վորը խախտված է լինում ձմեռը  
չոր կերով կերակրելու ժամանակ:

Կանաչ կերը բազմակողմանի չէ և իր մեջ պարունակում է  
պահանջված հարաբերությամբ անհրաժեշտ անոգարար հյութեր:  
Արոտատեղում կովն ոգտվում է շարժումով, մաքուր ոգով,  
արևով, իսկ այդ բոլորը չափազանց բարենպաստ կերպով են  
ներգործում անասունի առողջության վրա: Ահա թե ինչու մինչև  
անգամ ձմեռը սաստիկ նիհարած կովերը լավ արոտատեղում  
արագորեն կազդուրվում են:

Գոմում կերակրվող կովին պետք է աստիճանաբար վար-  
ժեցնել արոտատեղում կերակրելուն: Նախ քան ընդհանուրնա-  
խիրի մեջ թողնելը, նրան պետք է 7—10 օրվա ընթացքում  
տանը կապած, վարժեցնել կանաչ կերին: Առաջին օրը կովին  
արոտ պետք է թողնել կերակրված, վորպեսզի նա ազահորեն  
չընկնի խոտի վրա: Առաջին յերկու—յերեք օրը պետք է արա-  
ծացնել միայն 2—3 ժամ, հետո ամեն օր արածացնելու ժամա-  
նակը յերկարացնել մի ժամ: Յեթե այդ ցուցումները պահվեն,  
ապա կովի փորը վոչ կուռչի, վոչ էլ կլուծի:

Կովն արոտատեղում կերակրելիս պետք է նրան աղ տալ:  
Կոլխոզնիկների նախիրն արածացնելու համար յերբեմն հատ-  
կացնում են միամյա արոտատեղեր: Այդ արոտատեղերում խոտը  
լինում է գարնանից, իսկ ամառվա կեսին բացի փշերից և չուտ-  
վող խոտերից, այնտեղ վոչինչ չի լինում: Անասունները նիհա-  
րում են և պակասեցնում կաթնատվությունը: Այդպիսի դեպ-  
քում անհրաժեշտ է կովին լրացուցիչ կանաչ կեր տալ: Լրա-  
ցուցիչ կեր տալու մասին պետք է հոգալ գարնանից: Նայած  
արոտատեղի գրության, պետք է տալ 15—20 կիլոգրամ կանաչ  
կեր: Իսկ դրա համար հարկավոր է հնձել 15—20 քառակուսի  
մետր ցանած խոտ:

Յերկու ամենաձանր ամիսների—հուլիսի և ոգոստոսի համար  
պետք է ունենալ 1200 քառակուսի մետր (մեկ ութերորդ հեկ-  
տար) ցանած խոտ: Այդպիսի տարածություն համարյա ամեն  
մի կոլխոզնիկ կարող է ապահովել իր համար ազարակային-  
հոգամասում:

Լրացուցիչ կերով կերակրելու համար հանձնարարվում է  
ցանել սուդանկա, նաև աուվոյտ, հատկապես ցածր վայրերում  
և խոնավ աշուններում: Պետք է նկատի ունենալ, վոր առանց  
վարժեցնելու չի կարելի կովին կանաչ աուվոյտ շատ տալ, հա-  
կառակ դեպքում նրա փորը կուռչի: Կովն աուվոյտին պետք է  
ընտելացնել աստիճանաբար, սկսելով տալ 5 կիլոգրամ և ամեն  
օր ավելացնել մի կիլոգրամ:


Աուվոյտը հատկապես ոգտակար է կթան կովի համար, վո-



բովհետև պարունակում է սպիրտակուցային շատ նյութեր, վորոնք հենց հարկավոր են կաթ պատրաստելու համար: Առվույտ ցանելը հարմար է և նրանով, վոր նրան կարելի յե ամառը 3—4 անգամ հնձել յեվ միտս քարմ խոս ունենալ: Շատ քիչ սերմ է պահանջվում, ամեն մե հեկտարին մոտավորապես 12—15 կիլոգրամ, իսկ մի ութերորդ հեկտարում մեկ ուկես—յերկու կիլոգրամ:

Միամյա բույսերից կարելի յե ցանել յեգիպտացորեն (ցանվում է սիլոսի համար):

Շատ հաճախ այնպիսի դեպքեր են լինում, յերբ կովին չի կարելի ընդհանուր նախիր թողնել, հիվանդացել է կամ ծնելու վերջին օրերն են: Այդպիսի դեպքում պետք է նրան արածացնել տանը կապած: Հաճախ լինում է այնպես, վոր արոտում խոտ չկա, իսկ փողոցներում կանգնած է չարածացրած լավ խոտ: Այդպիսի դեպքում նույնպես ավելի լավ է կովին արոտ չթողնել, այլ արածացնել կապած կերպով վերոհիշյալ տեղերում, տան մոտ:



Նկ. 10. Դանիական կապ:

Արածացնելու համար ամենահարմարը դանիական կապն է: Պատրաստում են փայտի յերկու ձողիկներ 30—40 սանտիմետր յերկարության, 4—5 սանտիմետր լայնության և 2 սանտիմետր հաստության: Վերին ձողի ծայրից 4 սանտիմետր հեռավորությամբ լայն կողմում բաց են անում յերկու անցք, վորոնց միջով անց են կացնում 30 սանտիմետր յերկարության պարան և ամրացնում են հանգույցներով: Այդ կապը գտնվում է կովի քթարմատի վրա (տես նկար 10):

Չողերի մեջտեղից, բայց արդեն մյուս կողմերի վրա (միջակտուր) նույնպես բաց են անում անցքեր և նրանց միջով անց են կացնում 70 սանտիմետր յերկարության պարան: Այդ կապը ձգում են կովի յեղջուրների հետևից, վորը պահում է սանձը գլխի վրա:

Չողերի ներքին ծայրից 5 սանտիմետր հեռավորության վրա և նրանց լայն կողմում բաց են անում յերրորդ զույգ անցքերը, վորոնց միջով ձգվում է պարանը — կապը, վորի ծայրը հանգույցով կապվում է Յեթե կովն սկսում է պոկվել, քաշել պարանը, ապա ձողերը իրար են մոտենում, սաստիկ ճնշում են թշերը և այնպես զսպում են կովին, վորը նա դադար

ում է քաշքշել: Պարանը կապվում է ողակ ունեցող յերկրորդ ցցին, շնորհիվ դրան նա ցցի շուրջը չի փաթաթվում:

Ընդհանուր նախիրը պետք է այնպես կազմակերպել, վոր նա 100—120 կովից ավել չլինի: Նախրի ավելի մեծ լինելու դեպքում կովերը վատ են արածում: 100—120 կովից բաղկացած նախրին սպասարկում են մի հովիվ և մի ողնական: Հովիվ պետք է նշանակել լուրջ, փորձված և զործը սիրող մարդու և վոչ թե մեկ անմիտի, ինչպես հաճախ պատահում է: Չե վոր հովիվին հանձնարարվում է նախիրը, վորն ահագին արժեք ունի: Նրա պարտականությունն է վոչ միայն կովերը ձիշա արածացնել, այլ և նկատել ցանկություն ունեցող կովերին և այդ մասին անմիջապես հաղորդել նրանց տերերին:

### ԿԵՐԸ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՆԱՍՈՐՈՒՄ ՄԹԵՐԵԼ

Համաձայն կոլտնտեսության յեկամուտների մթերքային մասի բաշխման կանոնադրության, կով ունեցող կոլխոզնիկները կեր ստանում են իրենց աշխուրների հաշվին (կերը գնահատվում է փողով): Բայց ամեն անգամ կոլխոզնիկը չի կարող հույս ունենալ կոլխոզից բավական քանակությամբ կեր և մանավանդ խոտ ստանալ, վորովհետև կոլխոզնիկներին տրվում է միայն կերի այն մասը, վորը մնում է կոլխոզի մեջ անասնապահական ապրանքային ֆերմաների, կոլխոզային լծկանի, ձիերի պահանջները լրիվ բավարարելուց և կերի պահեստի ֆոնդ ստեղծելուց հետո: Դրա համար ել միանգամայն ձիշա կլինի, յեթե ամեն մի կոլխոզնիկ ինքը հույս իր ուժերով ապահովելու կովին, թեկուզ մասամբ այնպիսի կերերով, ինչպես խոտ, կերի ձակնդեղ և սիլոս:

Ագարակային հողամասերում, վորոնք սովորաբար ծածկված են մոլախոտերով, պետք է ունենալ սուղանկայի և առվույտի ցանք: Մի հինգերորդ հեկտարը կարող է ապահովել մինչև 10 ցենտներ խոտով, իսկ այդ քանակությունն արդեն բավական է կովի կանոնավոր կերակրումը քիչ թե շատ ապահովելու համար: Հատկապես արժեքավոր է մթերել առվույտ նրա համար, վոր այդ խոտի մի կիլոգրամը պարունակում է 90 գրամ սպիրտակուց, այսինքն՝ ավելի, քան մի կիլոգրամ վարսակի կամ գարու թեփում:

Համաձայն Յերկրագործկոմի 1933 թվի հունիսի 10-ի վորոշման, ՄՏ կայանների ու կոլտնտեսությունների նախագահների վրա պարտականություն է դրվում սիլոսով ապահովել



վոչ միայն ամբողջ համայնացած անասունները, այլ և կոլխոզ-  
նիկների անհատական անասունները: Բացի դրանից, գյուղ-  
խորհրդների նախագահները պարտավոր են կոլխոզնիկների ու  
մենատնտեսների տնտեսութուններում սիլոսների կառուցել,  
հաշվելով ամեն մի տնտեսութւյանը 2—3 տոննա Ինքն ըստ ին-  
քյան հասկանալի յե, վոր յեթե կոլխոզներն իրենք գործոն  
մասնակցութւյուն չունենան այդ աշխատանքում, ապա վորո-  
շումը կմնա թղթի վրա:

Սիլոսը պատրաստելիս պետք է նկատի ունենալ, վոր մեծ  
փոսերում լավ սիլոս է ստացվում և նա քիչ է փչանում: Դրա  
համար ամենից լավ կլինի, յեթե 3 — 4 հարեվաններ կառու-  
ցեն 8 — 12 տոննանոց մի ընդհանուր փոս: Հենց փոսը լցնելու  
համար միասին աշխատելը շատ ավելի ձեռնտու յե: Այդպիսի  
փոս լցնելու համար կարելի յե կոլխոզից վերցնել սիլոսակարիչ  
շարժիչի հետ միասին:

Սիլոսը պետք է պատրաստել մուխտտերից, հատկապես  
պետք է աշխատել ոգսագործել կորնգանը: Չէ՛ վոր իր հատկու-  
թյամբ կորնգանը մոտիկ է առվույտին և պարունակում է շատ  
սպիտակուցային նյութեր: Նրան պետք է սիլոսացնել ծաղիկ-  
ները հայտնվելու ժամանակ:

Յուրաքանչյուր կովի համար սիլոսացման կեր պետք է  
պատրաստել 3 տոննից վոչ պակաս, վորպեսզի սկսած նոյեմ-  
բերի մեկից մինչև մայիսի մեկը կովին ապահովեն որական  
15 կիլոգրամ սիլոս տալու:

## ՀՈՐԹԵՐԻ ԱՋԵՑՆԵԼԸ

### ՀՈՐԹԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Ընդհանրապես կոլխոզնիկներին տալիս են 3 ամսական և  
ավելի հասակ ունեցող հորթեր չափահաս դարձնելու համար,  
այսինքն՝ այնպիսի հորթեր, վորոնք արդեն կարող են առանց  
կաթի մնալ: Կովագուրկ կոլխոզնիկի համար առանձին դժվարու-  
թյուն չի ներկայացնում այդպիսի հորթ անձեցնել: Հորթի հա-  
մար տեղ կարելի յե միշտ հարմարեցնել բակի շենքերում, իսկ  
նրան սնուցելու համար անհրաժեշտ քիչ քանակությամբ կերն  
այնքան դժվար չի ձարել, մանավանդ վոր կառավարության  
վորոշման համաձայն կոլտնտեսութւյունը կաշակցի կոլտնտե-  
սականի անհատական անասունների համար կեր մթերելու  
գործին:

Հորթի համար բնակարան կարող է ծառայել բակի վորևե  
մի շենքում գտնվող յուրաքանչյուր անկյունը, բայց պետք է  
աշխատել, վորպեսզի այդ անկյունը լինի բավական տաք, չոր,  
լուսավոր և ողբ մաքուր:

Շատ մենատնտեսներ, վորոնք իրենց տնտեսութւյունը հին  
ձևով են վարում, գտնում են, վոր ձմեռը հորթին կարելի յե  
պահել համարյա բոլորովին անպաշտպան շենքում, միայն թե-  
թևակի ծածկված կուրանման մի բանով: Դա սխալ է, այդ-  
պիսի ցուրտ, խոնավ շենքում հորթը սառչում է, մրսում է  
ընդունած կերի զգալի մասը գնում է վոչ թե նրա աճման,  
այլ մարմնի տաքացման համար: Այդպիսի շենքում կերն ավելի  
շատ է ծախսվում, իսկ կենդանին վատ է աճում: Շատ անհա-  
տականների մոտ, վորոնք իրենց անասունները սխալ ձևով են  
պահում, հաճախ կարելի յե տեսնել կեղտոտ, նիհար հորթեր,  
վորոնք ունեն, խիտ, թաղիքացած մազեր, վորոնցից կախված են



կեղտի կտորներ: Այդպես պահելով չի կարելի աճեցնել լավ գարգացած կաթնատու կով, վորը կարողանա ապահովել կոլխոզի ընտանիքը կաթնեղենով:

Սխալ ձևով պահելն ազդում է ապագա կովի մեծության և մթերատվության վրա: Հատկապես դա նշանակություն ունի լավացրած տեսակի հորթերի համար, ինչպես որինակ, կարմիր գերմանական, սիմենտալական, շվեցական անասունների խառժին տեսակների համար: Այդ լավացրած տեսակի հորթերը, վորոնք իրենց բնավորութամբ ավելի քնքուշ են, և հետևաբար ավելի պահանջկոտ են խնամելու և կերակրելու նկատմամբ, կարող են այդպիսի անբավարար շենքերում հիվանդանալ և վոչնչանալ: Մինչդեռ այդ հորթերը լավ խնամելու և պահելու դեպքում կարող են աճել և դառնալ բարձր կաթնատվություն ունեցող խոշոր կովեր:

Հորթի համար հատկացրած լավ շենքում միշտ ավելի հով պետք է լինի, քան բնակարանում, բայց միևնույն ժամանակ ամենաուժեղ սառնամանիքի դեպքում ջուրն այնտեղ չպետք է սառի: Հեշտությամբ կարելի չէ այդ բանին հասնել, յեթե շենքի կտուրը ծակ չունենա և չկաթի, պատերը ձեղքվածքներ չունենան, կառուցվի առաստաղ թեկուզ ճիպոտներից և ձողերից, լցված ծղոտով կամ հարդով և շենքը լավ տաքանա կավով կամ աղբով ծեփելու միջոցով:


Շատ ցածր և նեղ շենքում հաճախ ողբ փչացած է լինում: Դա վնասակար է կենդանիների համար: Այդպիսի շենքն ողափոխելու համար ոգտակար է պատերի վերևի մասում կառուցել ողանցք կամ ուղղակի անցքեր, վորոնք ցուրտ յեղանակին կարելի լինի ծածկել ծղոտով, իսկ ավելի տաք յեղանակին կամ կարիքի դեպքում մինչև անգամ ցուտ յեղանակին կարելի լինի բանալ շենքի ողափոխության համար: Վորպեսզի միջանցուկ հոսանքն անասուններին չհասնի, պետք է այդ անցքերը կառուցել ավելի վերևից կենդանու հասակից բարձր:

Շենքը պետք է լուսավոր լինի: Կենդանին յերկար ժամանակ մութ շենքում պահելուց, հատկապես մութ շենքից դրսի պայծառ լույսին անցնելու խիստ փոփոխությունից նրա տեսողությունը փչանում է: Բացի այդ, լուսավոր շենքն ավելի հեշտ է մաքուր պահել, լուսավոր շենքում ավելի հեշտ է խնամել կենդանիներին, ավելի հեշտ է ժամանակին նկատել յերևացող հիվանդությունները, և կենդանին էլ լուսավոր շենքում ավելի սակավ է հիվանդանում, քան մութ շենքում:

Պետք է աշխատել, վորպեսզի հորթին հատկացրած շենքում

լինեն մի կամ յերկու ապակեպատ լուսամուտներ: Լուսամուտները պետք է կառուցել արևի կողմը:

Վորպեսզի կենդանին միշտ չոր տեղում կանգնի, տակը մի քիչ պետք է թեք անել դեպի նրա հետևի վոտները: Թեքությունը շատ չնչին պիտի լինի, ամեն մի մետր լայնությունը մի սանտիմետր, այսինքն՝ առջևի վոտների տակի հատակը  $1\frac{1}{2}$  — 2 սանտիմետր ավելի բարձր պիտի լինի, քան հետևի վոտների տակի հատակը: Ավելի հարմար է թեքությունն անել շենքի դռան կողմը:



Նկ. 11 Հորթի համար շինված մուր

մանակ նրա հատակը չպետք է հատակի մակերեսից ցածր լինի: Կենդանին պետք է ուտի կուանալով, ճիշտ այնպես, ինչպես կերակրվում է արոտատեղում: Յեթե կենդանին ստիպված է բարձր պահել գլուխը, կերակրվելով բարձր դրված մսուրից, ապա դրանից փչանում է նրա կազմվածքը: Հարկավոր է մսուրի ճիպոտների բոլոր սուր ծայրերը հարթել, իսկ մեխերի ծայրերը ծռել, վորպեսզի կենդանին չկարողանա իրեն վնասել:

Յեթե հորթին տրվում է թեկուզ փոքր քանակությամբ ուժեղ կեր (հատիկ, քուսպ), ապա այդ կերը տալու համար պետք է շինել ամուր տաշտ, վորպեսզի այդ թանկարժեք կերերը չթափվեն: Այդ տաշտի տախտակները պետք է ունդել, թեկուզ ներսի կողմից:

Յեթե կոլխոզի ոժանդակ տնտեսություն մեջ կա ընդարձակ շինություն, ապա այնտեղ միաժամանակ կարելի չէ պահել զանազան կենդանիներ, ինչպես, որինակ, վոչխար, հորթ, այծ, խոզ, նպատակ ունենալով տնտեսել ծախսերը, ավելի լավ



տաքացնել հենց շենքը: Չանազան կենդանիներ մի շենքում այդպես միասին պահելու դեպքում, դարձյալ անհրաժեշտ է յուրաքանչյուր տեսակ կենդանին բաժանել մյուս տեսակից, վոչխարներն ու կովերը խոզերից, հորթերը վոչխարներից, այծերից և խոզերից և այլն: Դա անհրաժեշտ է անել նրա համար, վոր զանազան կենդանիներ պահանջում են զանազան կեր և խնամք, անհամեմատ և ավելի լավ են զգում իրենց նմանների միջև և վոչ թե ուրիշ տեսակի կենդանիների միջև:

Հավերին, բաղբերին և մյուս թռչուններին չպետք է պահել միևնույն շենքում, վորտեղ զանվում են հորթերը: Թռչունների վրա ապրում են պարագիտներ, վոջիլ, շնածանձ, վորոնք կարող են անցնել և կենդանիների վրա:

### ՅԵՐԵԳ ԱՄՍԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԻ ՏԱՐԵԿԱՆ ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Ամառը հորթի համար հիմնական կեր հանդիսանում է կանաչը, իսկ ձմեռը խոտը: Փոքր հորթերի համար ամենալավ խոտը զանազան կանաչների խառնուրդից յեղած մանր խոտն է: Հորթի համար լավ խոտ է, որինակ, մարգագետնի խոտը, սեզը, իսկ ցանած խոտերից — վիկը, վարսակը, առվույտը, յերեքնուկը, հացաբույսերը և այլն: Միայն պետք է աշխատել, վորպեսզի խոտը ժամանակին հավաքվի, հնձի ժամանակն անցած չլինի, խոտը խոնավ կամ բորբոսնած չլինի: Կանաչը պետք է քաղել ծաղկելու ժամանակ:

Հացահատիկային բույսերի ծղոտը լավ է չտալ հորթերին մինչև մի տարեկան հասակը: Փոքր հորթերի համար դա չափազանց սակավասննդարար կեր է: Յեզիպտացորենի ծղոտը, յեթե նա տրվում է այնքան, վոր հորթերը կարող են շոկել և ուտել միայն ամենամանր ու սննդարար մասերը, ավելի լավ կեր է հորթերի համար, քան հացահատիկային բույսերի ծղոտը:

Հորթերի համար շատ լավ կեր է ճակնդեղը, կերի գազարը, զգուժը, ձմերուկը (որինակ իսկ ձմերուկները-աշնանը բուտանը հավաքելու ժամանակ): Ամեն մի կոլխոգնիկ կարող է այդ կերերից բավական շատ հավաքել իր ազարակային բանջարանոցից: Աշնանից համարյա յուրաքանչյուրի մոտ լինում են այդ կերերը: Հարկավոր է այդ կերերը հարավորին չափ յերկար պահել և հորթին թեկուզ քիչ քիչ տալ, դրանով գանազանություն մտցնելով կերի մեջ:

Դրումն ու ձմերուկը հորթերին պետք է տալ կտրատված վիճակում, այնպես վոր նրան չխեղդի: Ճակնդեղը, գազարը յեթե խոշոր են, կարելի յե տալ ամբողջությամբ, կենդանին կսկսի աստիճանաբար կրծել նրանց: Մանր ճակնդեղը նույնպես պետք է կտրատել: Արմատապտուղները (ճակնդեղը, գազարը) նախքան կենդանիներին տալը, պետք է լվալ, մաքրել հողից:

Անասունների համար շատ լավ ոգտակար կեր է սիլոսը: Հյուսիսային Կովկասի Յերկրգործկոմի նախագահությունը 1933 թ. հունիսի 10-ի նույն տարվա «Սիլոսացման պլանի մասին» արած իր վորոշման մեջ պարտավորեցնում է գյուղխորհրդներին ոգնել սիլոս կառուցելու յուրաքանչյուր անհատական տնտեսության մեջ, այն հաշվով, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական ու անհատական կառուցի յերկու սիլոսային փոս (2 — 3 տոնն ընդհանուր տարողությամբ): Սիլոսացնելու համար պետք է ոգտագործվեն առաջին հերթին մոլախոտերը, վայրի վոչ թունավոր խոտերը, բանջարանոցների և բուստանների մնացորդները:

Հարկավոր է հիշել, վոր սիլոսը փոսից հանելուց անմիջապես հետո պետք է տալ անասուններին, հակառակ դեպքում նա շուտով փչանում է: Լավ, շատ չթրջված սիլոսն ունի թարմ թխած հացի հոտ:

Շատ լավ է, յեթե թեկուզ մինչև 8 — 9 ամսական հասակը հորթերին քիչ-քիչ տրվի հացահատիկային կեր (թեփ, գարի, վարսակ, յեզիպտացորեն, քուսպ): Ավելի աղնվացեղ հորթերին այդպիսի կեր տալը, թեկուզ շատ քիչ չափով, պետք է ուղղակի անհրաժեշտ համարել: Առան նրանց դժվար է աճեցնել լավ զարգացած խոշոր կենդանիներ:

Այդ կերերն ավելի ոգտակար է տալ չոր ձևով, մյուս կերերից առանձին և վոչ թե ջրալի կամ մյուս կերերի վրա ցանած: Ավելի լավ է հացահատիկը տալ վոչ ամբողջական, այլ խոշոր աղացած, բայց նրանց մի մասը դարձյալ անցնում է չծամած և չի մարսվում: Ամենից լավ է քուսպը տալ մանր աղացած և վոչ թե թրջած. վերջինս ախորժակով չի ուտում հորթը և թթվում է: Մյուս կերերի վատ լինելու դեպքում ցանկալի յե թույլ, նիհար հորթերին ուժեղ կերեր ավելի շատ տալ: Ավելի տոկուն հորթերին լավ կերերի դեպքում ուժեղ կերեր պետք է քիչ տալ: Հորթերին կարելի յե առատորեն խոտ տալ:

Չանազան հասակի հորթերը միջին թվով որական ուտում են մոտավորապես հետևյալ քանակությամբ խոտ (կիլոգրամներով).



Հասակը	Եզ հորթ	Արու հորթ
3 — 6 ամիս	2 — 3	2 — 3
6 — 8 »	3 — 6	3 — 5
8 — 12 »	6 — 8	5 — 7
12 — 18 »	8 — 9	7 — 8
18 — 24 »	9 — 10	8 — 9

Հյուսիսի կեր տալու դեպքում կոպիտ կերերի քանակը պակասում է:

Հյուսիսի կերերը (դդում, ճակնդեղ, սիլոս) յերեք ամսական հորթերին տալիս են որական 1 — 2 կիլոգրամ: Ավելի հասակավոր հորթերին շատ են տալիս: Մոտ մի տարեկան հասակում այդ կերերից հորթին կարելի յե տալ որական 8 կիլոգրամ: Լավ վորակի սիլոսը հորթերին կարելի յե տալ արդեն չորս ամսական հասակից:

Չպետք է միանգամից մի որվա համար շատ կեր տալ: Այդպիսի կերի մի մասը հորթը միայն դուր տեղը թափվում է: Առհասարակ կենդանիներն ախորժակով չեն ուտում այն կերը, վորը յերկար ժամանակ գտնվում է գոմում և իր մեջ ընդունել է աղբի ու շնչառության հոտը: Չպետք է ծուլանալ ավելորդ անգամ կեր տալ: Ղրանով կարելի յե և կերը տնտեսել և միևնույն կերով կարելի յե աճեցնել ավելի լավ, ավելի չաղացրած կենդանիներ:

Ավելի ճիշտ կլինի կոպիտ կերը տալ որական յերեք անգամ, իսկ հյուսիսի և ուժեղ կերը — մի կամ յերկու անգամ: Յեթե միաժամանակ տալիս են և ուժեղ, և հյուսիսեղ, և կոպիտ կեր, ապա պետք է տալ հետևյալ կարգով — առաջ ուժեղ կերը, հետո հյուսիսեղը և հետո կոպիտ կերը:

Մտուրը միշտ պետք է մաքուր պահել և կերի մնացորդներն ու ամեն տեսակ կեղտերը նրա միջից դուրս ձգել:

Հնարավորության դեպքում ավելի լավ է հորթի կերակրելը բազմապիսի դարձնել — նրան տալ զանազան բույսեր, հյուսիսի կեր, ուժեղ հատիկային կեր: Ըստ վորում լավ է տալ ուժեղ կերի խառնուրդ, թեկուզ քիչ-քիչ: Այդպիսի զանազան տեսակի կերն ավելի ոգտակար է հորթի համար:

Պետք է աշխատել, վոր հորթի մոտ միշտ աղ լինի, վորը նա կարողանա լիզել: Հարկավոր է որական մի յերկու թեյի գդալ մանրած կավիճ ցանել հորթի համար (լավ է մտուրի հատակին), վորպեսզի վոսկորները լավ աճեն:

## ՄԻ ՏԱՐԵԿԱՆԻՑ ՄԵՐ ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼ

Մի տարեկանից մեծ հորթերի կերակրելը նրանով է տարբերվում վորը հորթերի կերակրելուց, վոր մեծ հորթերին կարելի յե արդեն վատ տեսակի, ավելի կոպիտ խոտ տալ, քան վորը հորթերին: Այդպիսի հորթերին կարելի յե խոտի մի մասի փոխարեն տալ և գարնանացան բույսերի ծղոտ: Հյուսիսի կերերը կարելի յե արդեն մեծ քանակութամբ տալ որական մինչև 10 — 15 կիլոգրամ: Այդպիսի հորթերը կարող են բոլորովին առանց ուժեղ կերերի մնալ, հնայած յեթե հնարավորություն կա քիչ-քիչ այդպիսի կերեր տալ, ապա հորթերն ավելի լավ կաճեն, ավելի արագ կգարգանան, ավելի շուտ կարելի յե նրանց ցուլերի մոտ թողնել և ավելի շուտ սպասել այն մոմենտին, յերբ յերինջը կով կդառնա ու կաթ կտա:

Մեծ հորթերին կերակրելիս նույնպես չպետք է միանգամից չափազանց շատ կեր տալ: Ըստ հնարավորության պետք է տալ զանազան կերեր, չպետք է մոռանալ տալ նաև աղ և կավիճ, մտուրը մաքուր պահել և մաքրել նրան կերի մնացորդներից:

Ծղոտը լավ ոգտագործելու համար կարելի յե պատրաստել, այսպես կոչված՝ «ինքնամզված կեր», վորը հետևյալ կերպ է պատրաստվում. հարդը կամ ծղոտի կտորները (4 — 5 սանտիմետր յերկարութամբ) թանձր լցվում է չորս մասի բաժանված փայտի խոշոր արկղի մասերից մեկը:

Արկղը պետք է լինի այնպիսի մեծության, վոր նրա ամեն մի մասում տեղավորվի հարդի կամ կտրած ծղոտի որական բաժինը: Ծղոտը լցնելիս լավ ճնշում են և թըջում ջրով (մի խորանարդ մետր լավ ճնշած կերին լցնում են մոտ 8 վեդրո շուր — 96 լիտր): Ամեն որ լցվում է արկղի մի մասը: Չորրորդ որը արկղի առաջին մասում գտնվող կերը պատրաստ է կերակրելու համար, դուրս է հանվում և այդ մասում լցվում է կտրած ծղոտի նոր բաժինը: Լավ ճնշած ինքնամոտած կերի մի խորանարդ կերը կշռում է մոտավորապես մի ցենտներ:

Ամենազլխավորն այն է, վոր ճիշտ հաշվեն, թե հորթի համար ձմեռն ինչքան կեր է հարկավոր, ժամանակին պատրաստեն անհրաժեշտ կերերը և այնպես ծախսեն, վոր նրանք բավակա-նացնեն ամբողջ ձմեռը: Մեզ մոտ հաճախ պատահում է, վոր աշնանից առանց վորևե հաշվի կերը թափվում են և մտուրը, և կենդանու վոտների տակ, իսկ ձմեռվա վերջին, յերբեմն ել ձմեռվա միջին կերը պակասում է և կենդանին սոված է մնում:



Հատ ե աս կոլխոզնիկը, վորը թույլ ե տալիս այդպիսի անհաշիվ կերակրում:

Հորթի կերի մոտավոր պահանջը հետեւյալն ե.

	Կ ի լ ո ՞ գ ր ա մ ն ե ր ո Վ		
	Ուժեղ կեր	Ն ո տ	Հյութալի կեր
Կերերի ծախսումը մի տարեկան հասակում	400	800	750
Մեկ ու կես տարեկան հասակում	600	1800	1500

### ՀՈՐԹԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Հորթերը պետք ե մաքուր պահվեն: Ավելի լավ ե նրանց թողնել վոչ թե աղբի վրա, այլ ամեն որ մաքրել աղբը և տակը փռել թարմ ծղոտ: Յեթե հորթերն ապրում են փայտե հատակի վրա, ապա աղբը մաքրելուց հետո յեւ հատակը բավական տաք կլինի: Աղբից հետո մաքուր հատակի վրա պետք ե փռել թարմ ծղոտ, ավելի լավ ե որական նուշնիսկ յերկու անգամ, ըստ վորում խոնավ ծղոտը պետք ե դեն գցել և անպայման փոխարինել թարմ ծղոտով: Հորթերին պետք ե ամեն որ մաքրել փափուկ խոզանակով, իսկ կեղտի կտորները հեռացնել մետաղե սանրով: Յեթե խոզանակ չկա, ապա կարելի յե նրա փոխարեն գործածել ծղոտե հյուսվածք:

Կեղտոտ տեղերը պետք ե լվանալ տաք ջրով և հետո սրբելով չորացնել: Հորթերի համար շատ մեծ նշանակութուն ունի նրանց մաքուր լավ պահելը: Միևնույն կերը տալիս՝ մաքուր հորթերն ավելի լավ են զարգանում, քան կեղտոտ հորթերը:

Ամեն որ բացի շատ վատ յեղանակներից (ուժեղ քամիներ, սառնաշունչ քամիներ) հորթերին պետք ե դուրս հանել զբոսանքի, ըստ վորում հնարավորութուն պետք ե տալ վազվզել, խաղալ, և վոչ թե կապած պահել մի ցցի շուրջը: Հորթի կանոնավոր աճման համար հարկավոր ե ազատ շարժում, որական թեկուզ մի քանի ժամ:

Մինչև մի տարեկան հորթերին՝ ավելի լավ ե շենքում վոչ թե կապած պահել, այլ վորե ե մի ցանկապատած տեղում: Յեթե հորթերին կապում են, ապա լավ ե վզից կապել և վոչ թե յեղջուրներից: Չպետք ե ամուր կապել, վորպեսզի կենդանին չխեղդվի:

Հորթերին պետք ե ջրել մաքուր ջրով, վոչ պակաս քան որական յերկու անգամ: Ուժեղ ցրտերի ժամանակ պետք ե ջրել սենյակում մնացած և քիչ տաքացած ջրով: Պետք ե ջրել կամ շենքում, կամ դրսից գոմ վերադարձնելուց առաջ և վոչ թե զբոսանքի հանելուց առաջ, վորովհետև ջուրը խմելով, հատկապես սառը ջուր — կենդանին կարող ե մրսել:

### ՀՈՐԹԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԽՆԱՄԲԸ

Ամառը հորթերի համար ամենալավ ժամանակն ե: Կանաչը նրանց համար ամենաոգտակար և սննդարար կերն ե: Սովորաբար հնարավոր ե այդ կերն առատորեն տալ հորթին: Որվա մեծ մասը հորթն անց ե կացնում թարմ ողում, արևի ճառագայթների տակ, այսինքն՝ նրա համար ամենաանհրաժեշտ և ոգտակար պայմաններում: Պետք ե աշխատել այդ ժամանակն ոգտագործել հորթի համար ամենալայն չափով:

Ճարվա տաք յեղանակներին հարկավոր ե հորթերին ավելի յերկար պահել բաց ողում, իսկ ամենավատ յեղանակներին տանել գոմը: Յերկրորդ տարին մտած հորթերին լավ ե նուշնիսկ հավաքել և ամբողջ ամառը հեռացնել վորևե հողամաս, վորն առատ ե լավ կանաչով և ջրով: Իհարկե դրա համար հարկավոր ե կազմակերպվել և այդպիսի ջահել անասունների նախրի համար հովիվ ընտրել: Կարելի յե պայմանավորվել կոլխոզի վարչության հետ, վորպեսզի նա հովիվ ընտրի և հորթատերերից պահի համապատասխան աշխուրբ:

Ամառը տանը մնացած հորթերին նուշնայես պետք ե հնարավորութուն տալ ավելի շատ ոգտվելու արոտատեղից: Սովորաբար անհատական հորթերն ամառվա մեծ մասն անց են կացնում կապված վիճակում: Ավելի լավ ե, յեթե տերը նրանց կապում ե լավ կանաչոտ տեղում և հաճախ կապը տեղափոխում ե թարմ արոտատեղեր:

Հորթերին պետք ե կապել յերկար պարանով, ցիցը գետնից շատ քիչ բարձր խիվի, վորպեսզի պարանը նրա շուրջը չփաթթվի: Կապի ողակը պետք ե այնպես պատրաստված լինի, վոր չսեղմի հորթի վիզը: Հարմար ե, այսպես կոչված՝ «դանիական կապը», վորի կազմութունը յերևում ե 35 եջում տեղավորված նկարից:

Հորթերին պետք ե ջրել վոչ պակաս, քան որական 2 — 3 անգամ և միայն թարմ, մաքուր ջրով:

Չպետք ե մոռանալ, վոր ամառվա ընթացքում հորթերին



նույնպես պետք է աղ տալ, վորն անհրաժեշտ է նրանց համար ամբողջ տարին:

Թեկուզ և 8 — 9 ամսական հորթերին շատ ոգտակար է ամառը նույնպես քիչ քանակութամբ (0,5 — 1 կիլոգրամ) ուժեղ կեր տալ:

Լրացուցիչ ուժեղ կեր տալն այնքան ավելի անհրաժեշտ է հորթերին, վորքան նրանք ավելի փոքր են և ցեղական: Ավելի հասարակավոր և տեղական վոչ ազնվացրած հորթերի համար լրացուցիչ կերն այնքան էլ հարկավոր չէ: Ուշադրութիւն պետք է դարձնել արոտատեղերի վորակի վրա: Լավ արոտների դեպքում հորթերը կարող են մնալ և՛ առանց լրացուցիչ կերի: Վատ արոտի դեպքում պետք է նրանց տալ լրացուցիչ կեր, հակառակ դեպքում հորթերի աճումը կդադարի: Մեզանում սովորաբար արոտատեղերը լավ են լինում մայիսին և հունիսին: Հուլիսին ու ոգոստոսին արոտատեղերն այրվում են և այդ ժամանակ պետք է աշխատել հորթերին տալ լրացուցիչ կեր: Ավելի մեծահասակ հորթերի համար լրացուցիչ կեր կարող է ծառայել պոկած կամ հնձված կանաչը կամ մի վորևէ այլ հյութալի կեր, որինակ՝ յեգիպտացորենը և ճակնդեղը, վորոնք պոկված են նրանց շարքերը նոսրացնելիս, հետո ձմեռվանից մնացած սիլոսը և այլն:

Հորթերին հարկավոր է մաքրել նաև ամառը, իսկ մի-յերկու անգամ նույնիսկ լողացնել տաք ջրով և սապոնով, լավ է կանաչ սապոնով:

### ՅԵՐԲ ՊԵՏԲ Ե ԶՈՒԳԱՎՈՐԵԼ ՅԵՐԻՆՁԻՆ

Աճեցրած յերինջին չպետք է շատ ջահել հասակում զուգավորել: Այն յերինջը, վոր ծնում է և սկսում է կթվել շատ վաղ, դադարում է մեծանալ: Վաղաժամ զուգավորված յերինջից աճում է փոքրահասակ, սակավ կաթնատու կով:

Զպետք է և հակառակը վարվել — յերինջը շատ ուշ զուգավորել: Յերկար ժամանակ չզուգավորված յերինջները հետագայում հաճախ ստերջ են մնում:

Կարմիր-գերմանական յերինջների և նույն ցեղի մետիսների զուգավորման նորմալ հասակը պետք է համարել մի տարի ութ ամսականից մինչև մի տարի 10 ամիսը, կարմիկական և գորշ-ուկրալինական ցեղի համար  $2\frac{1}{2}$  տարեկան հասակը: Հենց այդ կանոններով պետք է առաջնորդվել: Յերբ յերինջը վորևէ մի պատճառով դադարել է գարգանալ և շատ փոքրիկ է, ապա

ողտակար է զուգավորումը մի քանի ամիս հետաձգել: Վորոչ չափով ուշ ծնունդն այդպիսի դեպքում նպաստում է յերինջին ավելի խոշոր կով դառնալուն:

Զուգավորման մոմենտին կարմիր-գերմանական ցեղի յերինջների ցանկալի քաշը 270 — 280 կիլոգրամ է:

Յերինջը վորպեսզի ժամանակից առաջ ցանկութիւն չունենա, արդեն 6 ամսական հասակից ցուլերը պետք է առանձնացվեն յերինջներից, պահվեն ու արածեն առանձին: Անպետք ցուլերին պետք է կրտել: Զի կարելի նույնպես յերինջներին թույլ տալ արածել այն նախիրներում, վորտեղ գտնվում են ցեղական ցուլեր: Դա նույնպես կարող է վաղաժամ կերպով հղիացնել յերինջին:

Անհրաժեշտ հասակի հասած յերինջը յերբ ցանկութիւն է ունենում, պետք է զուգավորել ազնվացեղ լավ ցուլի հետ ձեռքի վրա, այսինքն՝ տանել նրան ցուլի մոտ, վորպեսզի ցուլը նրա հետ ձեռքից հարաբերութիւն ունենա: Բավական հեշտ է իմանալ, թե յերինջը ցանկութիւն ունի՞ արդո՞ք: Ցանկութիւն ունեցող յերինջը անհանգիստ է, նրա հեշտոցը թեթևակի ուռչում է և նրանից քիչ լորձունք է հոսում:

Յեթե մի քանի յերինջներ կամ կովեր միասին են ման գալիս, ապա ցանկութիւն ունեցող յերինջը թռչում է ուրիշ յերինջների վրա, իսկ նրանք թռչում են նրա վրա:

### ԻՆՉՊԻՍԻ ՑՈՒԼԻ ՀԵՏ ՊԵՏԲ Ե ԶՈՒԳԱՎՈՐԵԼ ՅԵՐԻՆՁԸ

Բոլորովին միևնույնը չէ, ինչպիսի ցուլի հետ պետք է զուգավորել յերինջին: Դա շատ կարևոր հարց է: Ցուլի ընտրութիւնից է կախված ստացված սերունդի արժեքը և յերկրի անասնապահութեան լավացումը:

Զուգավորման համար ցուլի ընտրութեանը պետք է շատ լուրջ մոտենալ: Ցուլը պետք է ծնված լինի լավ կաթնատու կովից, վորովհետև մոր լավ կաթնատուութիւնը ցուլի միջոցով արվում է սերնդին: Լավ է, յեթե ցուլի հայրը նույնպես առաջացել է առատ և յուղալի կաթ ավող կովերից: Ցուլը պետք է լավ կազմվածք ունենա, առողջ լինի և իր ցեղի համար նորմալ մեծութիւն ունենա: Ցուլը պետք է պատկանի այն ցեղին, ինչպիսին ընդունված է տվյալ ուսյունում: Յերկրի անասնապահութիւնը վորպեսզի արագ լավանա և վերջ արվի ներկայումս գոյութիւն ունեցող խայտաբղետ գանազան տեսակներին, կառավարական կազմակերպութիւնները նախատեսել են, թե այս



կամ այն ուայոնում անասունների ինչպիսի տեսակներ պետք է ձգտել աճեցնել: Յերկրամասի ուայոնների մեծ մասում պետք է զարգացնել կարմիր-գերմանական տեսակը, լեռնային ազգային մարզերում և Սևծովյան ուայոնների մի մասում շվեցարական տեսակը (կարմրավուն շվեցարական տեսակը, այդ տեսակի անասունները մեղանում դեռ շատ քիչ են): Կովկասի ավելի բարձր լեռնավայրերում թույլ է արվում ոգտվել տեղական ցուլերով: Յերկրամասի արևելյան մասում պետք է աճեցնել կալմիկական անասուններ, բայց այդ անասունները շատ սակավ կաթնատու յեն: Մասամբ կալմիկական անասունները լավանում են արտասահմանյան շորտորն ու հերֆորդ տեսակի ցուլերով:

Տվյալ ուայոնում ընդունված տեսակի ցուլով ել հենց պետք է զուգավորել յերինջը: Յուրաքանչյուր կոլտոգ պարտավոր է պահել պլանային տեսակի լավ ցուլեր, կոլտոգնիկների անհատական անասունների սպասարկման համար:

Չեռքի զուգավորման դեպքում ցուլը հարաբերություն է ունենում կովի (յերինջի) հետ զուգավորման առանձին դադահում: Այդպիսի զուգավորման դադահում մինչև անգամ խոշոր ցուլը կարող է հարաբերություն ունենալ փոքրիկ յերինջի հետ՝ առանց նրա մեջքը վնասելու վտանգի:

### ՀՂԻ ՅԵՐԻՆՋԻ ԽՆԱՄԷԸ

Խոշոր յեղջուրավոր անասունների հղիությունը շարունակվում է մոտ 9 ամիս:

Հղի յերինջին շատ ուշադիր կերպով պետք է խնամել: Պետք է աշխատել պաշտպանել նրան ամեն տեսակ հարվածներից, շարզվածքներից և անկումներից: Չի կարելի նրանց կերակրել փշացած, մզլած, տաքացած կամ սառած կերով, ջրել սառը ջրով, պահել միջանցուկ քամու տակ, շատ ցուրտ շենքում, զուրա թոզնել սառուկների վրա, արածացնել սառած կանաչի վրա — այդ բոլորը կարող են վիժման հասցնել: Յերինջին ավելի լավ պետք է կերակրել, հիշելով վոր կերի սննդարար նյութերի մի մասը պետք է ծախսվի մոր արգանդում հորթի զարգացման վրա: Չպետք է մոռանալ կավիճ ու աղ տալ, այդ նյութերն այժմ հարկավոր են վոչ միայն մորը, այլ և հորթի վոսկրների ավելի լավ աճման համար: Ծնելուց 2—3 ամիս առաջ պետք է դադարեցնել հղի յերինջին կերակրել վոչ այնքան լավ վորակի սիլոսով: Մինչև անգամ շատ լավ վորակի սիլոսն ավելի լավ է դադարեցնել տալ ծնելուց մի ամիս առաջ:

Ընդհանրապես յերինջը պետք է ավելի լավ կերակրել, խնամել նրան հատուկ ուշադրությամբ: Մոռենում է ամենապատասխանատու մոմենտը, մոտենում է այն նպատակը, վորին մենք ձգտում եյինք համարյա յերեք տարի շարունակ, աշխատանք ու միջոցներ ծախսել հորթի աճման վրա — աճած յերինջը պետք է շուտով կով դառնա և կոլտոգնիկի ընտանիքին, սնվելու համար, կաթնամթերքներ տա:

Կոլտոգնիկը պետք է ձգտի կուշտ, ունեվոր կյանքի և կհանի նրան: Այդ գործում նրան ոգնում է խորհրդային իշխանությունը: Հարկավոր է միայն ագնություն և խելացիորեն աշխատել, հիշելով, վոր «խորհրդային յերկրում աշխատանքը պատվի, փառքի, առաքինության և հերոսության գործ է» (Ստալին):



# ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ԿՈՎԻՆ ՅԵՎ ՀՈՐԹԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

## ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ավելի մեզ է նախագգուցացնել հիվանդութիւնը, քան թե բժշկել նրան» — ասում է առածը: Դա հատկապես ճիշտ է կենդանիների նկատմամբ: Ահա թե ինչու կոլխոզնիկի ուշադրութիւնը գլխավորապես պիտի դառնա կովին յեվ հորթին հիվանդութիւնից պահպանելու վրա:

Ամենավտանգավորը վարակիչ հիվանդութիւններն են: Նրանք առաջանում են ամենափոքրիկ կենդանի արարածների կողմից, վորոնք կոչվում են միկրոբներ: Յուրաքանչյուր հիվանդութիւն ունի իր համապատասխան միկրոբը: Այսպես, որինակ, կովը դաբաղով հիվանդանում է այն ժամանակ միայն, յերբ կերի հետ միասին նրա բերանն է ընկնում դաբաղի միկրոբը և այլն:

Չանազան միկրոբներ զանազան կյանք են վարում: Նրանցից մի քանիսը կարող են ապրել և զարգանալ միայն կենդանու մարմնի մեջ, մյուսները կարող են ապրել հենց կենդանու մարմնից դուրս, որինակ, հողում, աղբում, ջրում: Առաջին դեպքում կենդանիները կարող են վարակվել միայն շփվելով մյուս կենդանիների հետ, իսկ յերկրորդ դեպքում — արոտների, ջրի, կերի միջոցով:

Հիվանդութիւնն առաջացնող միկրոբները վոչնչացնել, դա նշանակում է կենդանիներին պահպանել հիվանդանալուց: Վնասակար միկրոբների դեմ պայքարելու առաջին գործնական միջոցն է, վոր կովը, հորթը և շենքը մաքուր պահվեն, վորովհետև միկրոբներն ապաստան են գտնում այնտեղ, վորտեղ կեղտն է յեվ վորտեղ արեվի նառագայթները չեն ընկնում:

Յեթե կովը հիվանդացել է մի վորևէ վարակիչ հիվանդութիւնով, ապա շենքը հատկապես պետք է լավ մաքրել, վայտե մասերը լվանալ մոխրաջրի յեռացրած լուծույթով: Մոխրաջրի լուծույթը հեշտ է պատրաստել արեածաղկի ցողունների կամ մոլախոտերի մոխրից: Հատակի տախտակը պետք է լվանալ կամ այդ լուծույթով կամ թարմ կրակաթով: Նրան պատրաստում են մի քաշ թարմ հանգցրած կրից և 10 քաշ ջրից: Հողե հատակը պետք է մաքրել բահով՝ 4—5 սանտիմետրի չափ և հանած հողը թաղել փոսի մեջ, իսկ հատակը ամրացնել, տրորել թարմ կավով:

Յեթե նախրի մեջ հայտնվում է վարակիչ հիվանդութիւն, որինակ՝ դաբաղ կամ սիբիրյան ախտ, այն ժամանակ ավելի լավ է կովին ու հորթին տուն բերել և վոչ մի դեպքում նրա չթողնել այն արոտատեղերը, վորտեղ արածել են հիվանդ կենդանիները:

Բացի այդ, հենց մարդիկ պետք է ամեն կերպ զգուշանան և չզննան այն բակերը, վորտեղ հիվանդ անասուններ կան, վորոհետև հիվանդութիւնը հեշտութեամբ կարելի յե տուն բերել կոշիկների ցեխի, շորերի կամ ուրիշ առարկաների միջոցով: Միանգամայն հասկանալի յե, վոր հիվանդ կովի տերերը նույնպես պետք է միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի հիվանդութիւնն իրենց բակից չտարածեն հարեվան բակերը:

Այնպիսի վարակիչ հիվանդութիւնները, ինչպես՝ սիբիրյան ախտը, չիխիրը (արնախտն միզում), ժանտախտը, կոլխոզնիկը չպետք է բժշկել, վորովհետև նրանք համարյա անբուժելի յեն: Յեթե այդ հիվանդութիւններից վորևէ մեկը գյուղ է մտել, ապա հարկավոր է միայն կանոնավոր կատարել անասնաբուժի բոլոր նրահանգները:

Դաբաղի դեպքում կոլխոզնիկն ինքը վորևէ բան կարող է անել: Այդ հիվանդութիւնը չափազանց վարակիչ է: Լավ հմուտ լնամբի դեպքում նա վտանգավոր չէ և անցնում է յերկուշաբաթվա ընթացքում: Հիվանդութիւնն սկսվում է տաքութեամբ, կովի կաթնատվութիւնը պակասում է, կենդանին դադարում է ուտել, Հետագայում բերանից հոսում է թանձր, թելի պես ձգվող թուք, իսկ ջրթուները, քիմբի, լնդերքների, լեզվի վրա հայտնվում են կարմիր բծեր, հետո բշտիկներ, վորոնք պատռվում են և վերք առաջացնում: Վերքեր առաջանում են և կճղակների միջև: Կեղտոտ պահելիս վերքերը թարախակալում են և գործը հաճախ այնքան է բարդանում, վոր կճղակներն ընկնում են:



Հիվանդ կենդանուն պետք է պահել չոր շենքում, առատ, չոր փոսոցով: Պետք է կերակրել թեփի կամ մանրած հատիկների լափով: Բերանն ամեն օր պետք է փողողել շիբի լուծույթով (2 մաս շիբ, 100 մաս ջուր): Յեթե այդ չկա, ապա կարելի յե փողողել մարգանցաթթույով կամ ուղղակի կաղնու կեղևի լուծույթով:

Կճղակների միջև պետք է քսել մազութ և մաքուր պահել: Յեթե կուրծի վրա վերքեր յերեվան, ապա պետք է քսել ցինկի յուղ կամ բորակի վազելին:


Բանի վոր մարդը նույնպես կարող է դաբաղով հիվանդանալ, ապա պետք է նախագոռչանալ—աշխատանքից հետո խնամքով լվանալ ձեռները կալաքարով և հուս կաթ չգործածել:

Փորոսիփի ուռչելը — վարակիչ հիվանդութուն չէ, բայց շատ հաճախ վերջանում է մահով, յեթե ժամանակին միջոցների չեն դիմում: Այդ հիվանդության պատճառն այն է, վոր սոված կենդանուն արածացնում են շատ հյութալի կանաչով խիստ ցողի ժամանակ: Կենդանին կհիվանդանա փորի ուռչելով, յեթե կանաչն ուտելուց անմիջապես հետո խսկուհն ջրեն նրան: Իսկ ամենից հաճախ կենդանին այն դեպքում է ուռչում, յեթե նա առանց վարժված լինելու ընկնի առվույտի կամ յերեքնուկի արոտատեղը, նաև գարնանը, յերբ կովը կամ ջահել անասունները չոր կերից անմիջապես հետո արածում են առատ արոտատեղում: Կանաչի արագ խմորումից կենդանու փորոտիքում զագեր են առաջանում և նրանք այնքան են փքում փորոտիքը, վոր կենդանին կարող է խեղդվելուց վոչնչանալ:

Հիվանդության առաջին նշանները հետվյալներն են—կենդանին կանգնում է լայն բաց անելով վոտները և չի ուտում: Նրա ձախ կողքը սաստիկ փքված է: Առաջին ոգնությունն այն է, վոր ձեռքով բռնելով լեզուն և թեթեվակի դուրս քաշելով նրան, աշխատում են փղձկում առաջացնել: Հենց դրա համար կենդանուն սանձահարում են ծղոտի հաստ հյուսվածքով և ման են ածում:

Ոգտակար է կենդանու ներսը լցնել հետևյալ դեղերը— ճաշի մի գդալ կրեոլին կամ ֆորմալին, լուծված յերեք բաժակ ջրում: Յեթե այդ դեղերը չեն ճարվում, ապա պետք է լցնել մի քառորդ լիտր ողի: Դեղը պետք է լցնել կենդանու թշի հետեվը բարձրացնելով նրա գլուխը: Ոգտակար է ձախ կողքին սառը ջուր լցնել և բոռնցքով սրորել նրան: Այն դեպքում, յեթե վոչինչ չի ոգնում և փորոտիքը շարունակում է ավելի ուժեղ փքվել, իսկ կենդանին պառկում է, ապա պետք է ծակել փորոտիքը:

Իրա համար ֆերմայում սանիտարի և անասնաբուժակի մոտ կա հատուկ գործիք—տրոակար: Նա բաղկացած է մետաղե խողովակից, վորի միջով անցնում է ճիզակը: Նիզակով անցք են բաց անում, և վորպեսզի անցքը չփակվի, նրա մե դնում են խողովակ, վորի միջոցով հենց փորոտիքից գազը դուրս է գալիս:



Նկ. 12 Փեման դեպքում փորոտիփի ծակելու տեղը (աղեղամեկ նշանը): Այում ծակ բաց անող հատուկ գործիք—տրոակար:

Յեթե տրոակար չկա, ապա փորոտիքը կարելի յե ծակել բարակ դանակով: Անհրաժեշտ է, վոր նրա յերկարութունը լինի 10 սանտիմետրից վոչ պակաս: Ծակված տեղը վորոշվում է այսպես. ցցվածքից մի ձեռքի լայնության չափում են հեռու և նույնքան ել գոտկատեղի վողների ծայրից, այսինքն՝ մոտավորապես փորի փոսի միջտեղում: Դանակն ուղղված պետք է լինի ներքեվ, առաջ և աջ: Անցքի մեջ պետք է դնել ուժեղ յեղեգնյա խողովակ: Նրա յերկարութունը պիտի լինի մոտավորապես 13—15 սանտիմետր, իսկ հաստությունը մատիտի չափ: Խողովակը մեջը դնելուց առաջ, նրան թեթեվակի պետք է այրել բոցի վրա, վորպեսզի ախտահանվի: Խողովակն այնպես են դնում, վոր մանի 9—10 սանտիմետր, բայց ծայրը դրսում մնա, վորպեսզի կարելի լինի բռնել մատներով և թույլ չտալ փորոտիքն անցնել:

Գագերը պետք է բաց թողնել աստիճանաբար, ժամանակ առ ժամանակ մատով փակելով խողովակը: Խողովակը վերքում պետք է պահել մինչև այն ժամանակ, յերբ պագերը դադարեն դուրս գալ: Իրանից հետո վերքին պետք է քսել մազութ կամ ողի: 3—4 օրից հետո կովն իրեն միանգամայն առողջ է զգում:

Հեշտ է նախագոռչացնել այդ հիվանդությունը: Կովին և ջահել անասուններին դարնան պետք է աստիճանաբար սովորեցնել կանաչ կերին և արոտ թողնել միայն կոպիտ կեր տալուց հետո: Չպետք է կովին և յերինջին սոված արոտ թողնել:



յերբ սաստիկ ցող ե, նայել չարածացնել առվայս յեվ յերեկ-  
նուկ: Առվույտ կարելի յե արածացնել, բայց սաստիճանաբար  
վարժեցնելով կենդանուն, սկզբում տալով ամենաքիչ բաժինը և  
հետո հետեւ ավելացնելով:

Փորոքիքի դակուքյունը: Ծեր, թույլ կովերը շարունակ ծղո-  
տով և հարթով կերակրելիս, նաև յեթե կովերը չեն զբոսնում, հի-  
վանդանում են փորոտիքի կեղտոտութեամբ: Այդ հիվանդութեան  
ժամանակ կովը դադարում է վորոճալ, փորն ուռչում է և  
բուռնցքով սեղմելիս կարելի յե շոշափել կերի կարծր կտորներ:  
Փորոտիքի շարժումն աննկատելի յե:

Հիվանդութեան բժշկութեանն այն է, վոր կովին տալիս են  
լուծողական — կես կիլոգրամ գլաուբերյան աղ՝ լուծված մի  
շիշ ջրում: Ոգտակար է նույնպես բուռնցքով տրորել փորի  
ձախ կողմը: Կես որվա ընթացքում կովին վոչ մի կեր չպետք  
է տալ:

Կուրծի բորբոքումը լինում է զանազան պատճառներից —  
փնսովածքից, ցուրտ, կեղտոտ հատակին պահելուց, վատ կթե-  
լուց և այլն:

Հիվանդութեան առաջին նշաններն այն են, վոր կուրծի մի  
կամ յերկու քառորդը սովորականից ավելի ջերմ է լինում, հետո  
կուրծի այդ մասերը պնդանում են և հիվանդոտ են դառնում:  
Կուրծի հիվանդ մասից կաթը կթվում է փսորված կամ թա-  
րախակալված: Կուրծի հիվանդ մասը պետք է առողջ մասից  
առանձին կթել: Առողջ կաթը գործածելուց առաջ պետք է  
անպայման յեփել, իսկ հիվանդ կաթը վոչնչացնել: Կովին ան-  
միջապես պետք է սկսել չոր կեր տալ և դադարեցնել ուժեղ  
կեր տալը:

Հենց վոր հիվանդութեանը յերևա, բժշկութեան համար  
իսկույն և յեթ պետք է դիմել անասնաբույժին՝ առանց ան-  
խնամ թողնելու, այլպպես կուրծի մի մասը կփչանա:

Ջրջուկը — վարակիչ հիվանդութեան է, վորով ավելի հա-  
ճախ հիվանդանում են ջահել անասունները: Հիվանդ տեղերը  
ճաղատանում են և ծածկվում հաստ, գորշ կեղևով: Ջրջուկը  
ուժեղ քոր է պատճառում: Ջրջուկն ամենից հաճախ լինում  
է հորթերի գլխի վրա: Ջրջուկի դեմ պայքարելու համար  
ամենից առաջ հարկավոր է մաքրել շենքը, վորտեղ կենդանին  
է գտնվում, կրով սպիտակացնել պատերը, հատակը և մտուրը:

Բժշկում են հետևյալ ձևով: Ջրջուկի կեղևներին նաֆթ են  
քսում, բայց այնպես, վոր կաշու առողջ տեղերին չդիպչի: Նավ-  
թից կեղևները փափկանում են և հետևյալ որը հեշտութեամբ

մաքրվում են բուլթ դանակով: Ամենահասարակ և ճիշտ միջոցը —  
դա — յեզան լեղին է, վորը հիվանդ դեղերին քսում են 2 — 3  
անգամ: Պետք է գործածել թարմ լեղի, վորը 10 որից ավել  
չի պահվել: Յեթե թարմ լեղի չգտնվի, ապա ուրիշ ձևով պետք  
է բժշկել: Հարկավոր է նախ և առաջ հորթին լավ լվանալ տաք  
ջրով և կանաչ սապոնով կամ կրեոլինի լուծույթով (յեթե ցուրտ  
յեղանակ է, պետք է լվանալ միայն փնսոված տեղերը), իսկ  
հետո հիվանդ տեղերում քսել հետևյալ յուղերից վորևէ մեկը.

- 1) կրեոլին . . . . . 1 մաս
- վազելին . . . . . 10 »
- 2) կրեոլին . . . . . 1 »
- մազուլթ . . . . . 10 »
- կանաչ սապոն . 10 »
- 3) պղնձի արջասպ . 1 »
- ծծմբափոշի . . 0,5 »
- վազելին . . . . . 10 »

Վազելինը կարելի յե փոխարինել վորևէ թարմ, անալի յու-  
ղով, որինակ՝ բուսայուղով:

Յուղը պետք է քսել հիվանդացած տեղերը, իսկ հետևյալ  
որը լվանալ տաք ջրով և կանաչ սապոնով:

Յեթե հիվանդ տեղերը մեկ-յերկու անգամ քսելով այլևս  
չեն ծածկվում գորշ կեղևով, նշանակում է ջրջուկը բժշկված  
է, հակառակ դեպքում բժշկութեանը դարձյալ կրկնում են:

Կեղտոտ պահելու դեպքում հաճախ կովերի և հորթերի վրա  
փոշիներ են յերևում — ամենից հաճախ վզի վրա, յեղջուրների  
մոտ և պոչարմատում: Նրանց վոչնչացնելու համար հարկավոր  
է կենդանուն լավ մաքրել, իսկ վարակված տեղերում շորով  
քսել մի մաս նավթի և 4 մաս բուսայուղի խառնուրդ. քսելը  
պետք է կրկնել յուրաքանչյուր 7 — 10 որում 2 — 3 անգամ:

Բող: Յեթե գարնան հորթերի մեջքին և կողքերին խոցեր  
են հայտնվում՝ ներսում խոշոր սպիտակ վորդեր, պետք է հիշել,  
վոր դրանք բողի թրթուրներ են: Յեթե թույլ տանք, վոր այդ  
խոցերը հասունանան և թրթուրները նրանց միջից դուրս ընկ-  
նեն և հողում թաղվեն, ապա այդ թրթուրներից առաջանում  
են հասակավոր ճանձեր, վորոնք դարձյալ կենդանիների վրա  
ձու կածեն: Բողերը խիստ տանջում և ուժասպառ են անում  
կենդանիներին և փչացնում են նրանց կաշին: Բողի թրթուր-  
ներով վարակված կովերը նիհարում են և պակասեցնում կաթը,  
հորթերը նույնպես նիհարում են և վատ են աճում:

Հարկավոր է բողի դեմ պայքարել: Այդպիսի պայքար պար-



տաղիւր կերպով հարկավոր ե տանել նաև կոլխոզնիկները անհատական անասունների նկատմամբ:

Բոռի դեմ պայքարելու համար հարկավոր ե դուրս սեղմել և վոչնչացնել նրա թրթուրները, յերբ նրանք բավականաչափ հասունանան (մոտավորապես մարտին — ապրիլին):

Յեթե շրջակայքում նկատվում են անասունների կոտորած՝ սիրիլյան ախտից, ապա գարնանը հարկավոր ե դիմել անասնաբուժին և նա հորթին նախազգուշացուցիչ պատվաստման կենթարկի այդ հիվանդության դեմ:

Հորթերը, հատկապես իրենց կյանքի առաջին ամսում յենթարկվում են զանազան վարակիչ հիվանդությունների, որինակ՝ սպիտակ լուծում, պարատիֆ, թոքերի վարակիչ բորբոքում և այլն: Իրա համար ել հորթի խնամքի վերաբերյալ պետք ե հատկապես պահել վերևում ցույց տված անասնաբուժական նախազգուշական միջոցները:

Հորթի հիվանդություններն իրենց արտաքին նշաններով շատ նման են միմյանց և այն ել մեծ դժվարությամբ են յենթարկվում բժշկության: Իրա համար ամենից լավն այն կլինի, վոր կոլխոզնիկը հիվանդության առաջին նշանների դեպքում իսկույն դիմի անասնաբույժի ոգնությանը:

Հորթերի հիվանդության նշաններն, են չոր, սախացած քրածայրի փայլ, իստուր սեմ, փոքրահիմք, պառկում:

Յերբեմն հորթը հիվանդանում ե վոչ վարակիչ փորճարինքով (տաքություն չունի), որինակ, յեթե նրան տան սառը, կեղտոտ, թթված կաթ կամ կուրծի հիվանդություն ունեցող կովի կաթ: Այդ դեպքում պետք ե կրճատել արվող կաթի կեսը, իսկ ստամոքսը մաքրելու համար խմացնել յերկու ճաշի զգալ արևածաղկի յուղ և 50 գրամ դլաոբերյան աղ. այդ բոլորը խառնում են կես բաժակ ցորենի թեփախաշի հետ: Ստամոքսը մաքրելուց և փորճարինքը դադարելուց հետո կաթով կերակրելն աստիճանաբար հասցնում են իր չափին:

Վեբերի բուժումը: Վերքի շուրջը պետք ե խուզել մաղերը, վերքը լվանալ կրեոլինի կամ կարբոլի լուծույթով (նրանց մի մասը 100 մաս ջրի հետ), իսկ հետո ցանել կաղնու կեղևափոշի նավթալինի հետ միասին: Լվանալն ու փոշի ցանելը պետք ե կրկնել ամեն որ: Սմառը վերքի մեջ վորդեր չառաջանալու համար, վերքին պետք ե քսել սուր հոտ ունեցող յուղ, վորը կարողանա քշել ճանձերին: Սմենահասարակ տեսակի քսելու յուղը պատրաստում են հետևյալ բաղադրով և մի մաս կրեոլինի խառնուրդով:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Յուրաքանչյուր կոլխոզնիկ պիտի ունենա կով, մանր անասուններ, թռչուններ . . . . . 3

Ինչպես պետք ե պահել կովին . . . . . 7

Ինչպես պետք ե լինի կոմը . . . . . 11

Կովի խնամքը . . . . . 14

Կթելու կանոնները և կուրծի խնամքը . . . . . 16

Կովի զուգավորումը . . . . . 19

Հղի կովի խնամքը . . . . . 20

Խնամքը ծնելու ժամանակ . . . . . 24

Մինչև յերեք ամսական հորթերի կերակրելը . . . . . 25

Կովերի կերակրելը . . . . . 33

Կովի կերակրելն արտաստեղում . . . . . 36

Կերը պետք ե նախորոք մթերել . . . . . 36

Հորթերի անեցնելը . . . . . 38

Հորթի բնակարանը . . . . . 41

3 ամսականից մինչև մեկ տարեկան հորթերի կերակրելը . . . . . 44

Մի տարեկանից մեծ հորթերի կերակրելը . . . . . 45

Հորթերի խնամքը . . . . . 46

Հորթերի ամառային խնամքը . . . . . 47

Յերբ պետք ե զուգավորել յերկու ջր . . . . . 48

Ինչպես ցուլի հետ պետք ե զուգավորել յերկու ջր . . . . . 49

Հղի յերկու ջր խնամքը . . . . . 51

Ինչպես պահպանել կովին յեկ հորթին հիվանդություններից . . . . . 51

Առաջին ոգնությունը . . . . . 51





Գրքի  
Цена 55 Կոպ.  
Коп.

21.735

На армянском языке

Я. П. Кальнин и М. К. Жак

**КАК СОДЕРЖАТЬ КОРОВУ  
И ВЫРАСТИТЬ ТЕЛЕНКА**

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԳՈՒԶՆԱԳԻՏ

ԴՐԱՏՈՎ-ԴՆՆ ՄԱՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՅՆՏՐ)